

1125

L. II. 6

1125







ՅԵԱՆՆԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՆՈՐ ՇԲԱՆ — 1900

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ: — ԹԻԻ Ա.Ժ

## ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ 1900 ՏԱՐԻՈՑ

ԿՈՆԴԱԿ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ Ն.Օ . ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ . 1 :

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

Յառաջարան . 3 :

Ասուածաւունջ Ս. Գրոց Տպագրութիւն . 65 :

Մեր Եկեղեցւոյ պաշտօնական լեզուն . 97 :

Կրօնաքերթիս Վեցամեայ Ընթացք . 161 :

Մեր Ազգային Լրագրութիւնն Էւ Հայ Բահանայն . 225 :

### ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Նախկին Կրօն Հայոց . 9 :

Դարձ Աբգարու . 13 :

Առաքելութիւն Մրբոյն Թաղեոսի . 41 :

Եղեսիոյ Եկեղեցին զկնի Աբգարու . 72 :

Առաքելութիւն Մրբոյն Բարթողիմէոսի . 107 :

Ոսկեանք Էւ Սուրբասանք . 129 :

Անյիշատակ Զարգացումն Հաւատոյ ի Հայս . 165 :

Ս. Գրիգոր Լուսաւորիչ . 193 :

Հալածանք ընդ Տրդատսաւ . — Ս. Հոփսիսիմեանք . 231 :

### ՔԱՐՈՉՔ

Ի Ս. Ծնունդն Քրիստոսի . 19 :

Ի Գալուսն Քրիստոսի յԵրուսաղէմ . 33 :

Հնազանդութիւն Ասուածային Կառնայ . 169 :

Բահանայական Անդրանիկ Քարոզ . 204 :

Սուրբ Խաչի նշանակութիւնն . 270 :

Բառաւանդորդական Խորհրդածութիւնք ի վերայ Մահացու

Մեղաց . — Հպարտութիւն . 239 :

Նախանձ . 54 :

Բարկութիւն . 85 :

Ծուլութիւն . 114 :

Ազահութիւն . 140 :

### ԽՐԱՏԱԿԱՆ

Բանք Մարկոսի Աւրելիոսի . 59, 94, 126, 153 :

Բանք Սենեկայ Իմաստասիրի . 179 :

Բարոյական Ոճանաւորք . 254, 282 :

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ**

- Լազ . ձեմարանի գրչագիր Աւեսարանն . 26, 79 :  
Առաքելականութիւն Հայ . Եկեղեցւոյ . 120 :  
Ժամանակ Չունիմք . 146  
Քերթուած . — Յիսուս Որդի . 217 :  
Դ . Խաչկոնց եւ “ ՈՐ ԷՆ ” . 156 :  
Ազօբք . 174 :  
Ամերիկայի Հայ Բողոքական Քարոզիչ մի . 250 :  
Քրիստոնէութեան բարեբար ազդեցութիւնը քաղաքակրթու-  
թեան գործոյն մեջ . 257 :  
Ճեմարիտ Բարեկամութիւն . 272 :  
Ամերիկայի Հայոց Նորահաստատ Երեսասարդաց Քրիստոնէական  
Ընկերութիւն . 279 :  
Շնորհակալութիւն . 51 :

**ԴՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ**

- Դալուս Քրիստոսի . 52 :  
Ս . Յովհաննէս Մկրտիչ . 91 :  
Ծնունդ Յիսուսի . 124 :  
Թլփասութիւն Քրիստոսի . 150 :  
Մանկութիւն Յիսուսի . 177 :  
Մկրտութիւն Քրիստոսի . 215 :  
Փորձութիւն յանապատի . 247 :  
Սրբազան Առաքեալք Քրիստոսի . 277 :

**ՊԱՏՄԱԿԱՆ**

- Նախաբունն Եկեղեցական Պատմութեան . 264 :

**ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ**

- Անգղիայէն . 187 :  
Ս . Երուսաղէմէն . 190 :  
Հնդկաստանէն . 192 :  
Ամերիկայէն . 219 :  
Պարսկաստանէն . 219 :  
Կ . Պօլսէն . 200, 280 :  
Ջաւայէնի . 222 :  
Զմբունիայէն . 223 :

**ՅԱԻԵԼՈՒԱԾ**

- Թուրք Հովուական . 289 :



Ե Կ Ե Ղ Ե Յ Ի  
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ



ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻ Ի Ա

ԱՊՐԵԼ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	Էջ
1. Օրհնութեան Կոնդակ Վեհափառ Հայրապետին .	1
2. Յառաջարան.	3
3. Աւանդութիւն Հայաստանեայց Եկեղեցոյ . —	
Նախկին Կրօն Հայոց .	9
Իսրճ Ա.բգարու .	13
4. Բարոց 'ի Ա. Մնունդն Քրիստոսի .	19
5. Լազարեան Ճեղարանի գրչագիր Աւետարանն .	26

Հանդիսիս բաժանորդագիրնն է ամենուրեք  
 սարեկան 4 Շիլինգ կամ 5 Տրան, վեցամսեայ  
 2 Շիլինգ կամ 2½ Տրանք թղթասարաւ:

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան  
 վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէ՛տ է ուղղել  
 առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէիւ . —

# Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա Մ Ս Ա Ք Ե Բ Ք

Կ ր օ Ն Ա Կ Ա Ն Ե ւ Ա Ս Տ Ո Ւ Ա Մ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Թ Ի Ի 1

Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն

Ա Պ Ր Ի Լ 1900

**Մ** Կ Բ Տ Ի Զ Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Բ Բ Ի Ս Տ Ո Ս Ի Ե Ի Ա Ն Հ Ա Ս Ա Ն Ե Լ Ի Կ Ա Մ Օ Բ Ն Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ Ե Պ Ե Մ Կ Պ Պ Ս Ա Պ Ե Տ Ե Ի Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Կ Ո Ս Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ Ծ Ա Յ Բ Ա Գ Ո Յ Ն Պ Ա Տ Բ Ի Ա Բ Բ Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Կ Ա Ն Ն Ա Ի Ա Մ Ե Ծ Ա Ր Ա Թ Ո Ւ Ո Յ Ա Բ Ա Ր Ա Տ Ե Ա Ն Ա Ռ Ա Բ Ե Լ Ա Կ Ա Ն Մ Ա Յ Բ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ Ս Բ Բ Ո Յ Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Կ Ե Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի . Շ ն ո ր հ ա ծ ի ն ո ր զ ւ ո յ Մ ա յ ր Ա թ ո ռ ո յ ս և հ ա ր ա զ ա տ ի ս ո ր ի ն բ ա ր Ե շ ն ո ր հ Տ . Թ ո ր ո ս Բ ա հ ա ն ա յ ի Տ . Ի ս ա հ ա կ Ե ա ն Ջ ու Ղ ա յ Ե ց ո յ , հ ո գ Ե ո ր հ ո Վ ու ի Հ ա յ ո ց Մ ա ն չ Է ս թ ր ք ա Ղ ա ք ի ն ու ի ր Ե մ ք ո Ղ յ ն ա տ ա ք Ե լ ա կ ա ն ը ն գ Հ ա յ ր ա յ Ե տ ա կ ա ն օ ր հ ն ու թ Ե ա ն :

Գ ո հ ո Ն ա կ ու թ Ե ա մ ք ս ր ա ի ը ն կ ա լ Ե ա լ զ զ ա տ ու ա կ ա ն զ ր ու թ ի ւ ն հ օ ր գ բ ա ր Ե շ ն ո ր հ ի տ ու Ե ա լ 'ի 25 Հ ո կ տ Ե մ Բ Ե ր ի ա ն ց Ե լ ո յ ու ր ա ի Ե զ ա ք ը ն գ ց ա ն կ ա լ ի ն ք ո մ ա ա գ ր ու թ ի ւ ն , ո ր Ե բ Ե Ե ա ն ճ ն ա գ ի ր հ ո Վ ի Ժ ո Ղ ո Վ Ը ր Գ Ե ա ն Ա ս ա ու ծ ո յ ո չ շ ա տ ա ց Ե ա լ ք ա հ ա ն ա յ ու թ Ե ա մ ք Ե Ե թ , զ հ Ե ո լ ի ն ի լ կ ա մ ի ք բ ա ր ո յ ա կ ա ն և մ տ ա ու ր զ ա տ ի ա ր ա կ ու թ Ե ա ն հ ա յ ժ ո Ղ ո Վ ր Գ Ե ա ն , ո ր ք ա ն գ ր ք ա ն զ ս ա հ մ ա ն հ Ե ո ի գ տ ա ն ի ն և ո ր ո ց ո ր ք Ե ր ի ց ա կ ի ց Ե ն ք Ե լ և ք ա ր ո Ղ ի չ ք կ ա ր Գ Ե ա լ ք բ ա ն ի ն կ Ե ն ա ց , հ ր ա տ ա ր ա կ ու թ Ե ա մ ք « Ե կ Ե Ղ Ե ց ի Հ ա յ ա տ ա ն Ե ա յ ց »

կրօնական պատուական հանդիսի, որ երբեմն 'ի լոյս  
ածէիք 'ի Բիւզանդիոն գեղեցիկ և դիւրամեկին ոճով  
ախորժեի մտաց բանասիրաց: Ուստի և մեք գովե-  
լով զայդ ազգօգուտ մտադրութիւն քո և ձեռնարկ  
սովին Հայրապետական կոնդակաւ օրհնեմք զքեզ  
և զաշխատութիւնդ, մաղթելով յերկնաւոր Հօրէն  
Ամենակալէ առատացուցանել 'ի քեզ զչնորհս ամե-  
նասուրբ հոգւոյն իւրոյ, զի կարող լինիցիս մշտատե  
սիրով, ազգասէր հոգւով և կրօնասէր եռանդեամբ  
զուն գործել յօգուտ և 'ի փառս Ս. Եկեղեցւոյս Հա-  
յաստանեայց և 'ի փրկութիւն և 'ի բարօրութիւն  
հաւատացեալ մանկանց նորին, զի և դու կատարե-  
լով զպարտիսդ անձնուէր սիրով, ընկալցիս աստ  
զաստուածապարգև բարիս ցկէտ կոչմանդ, և 'ի հան-  
դերձելումն ժառանգակից Ս. Հարցն Հայաստանեայցս  
Եկեղեցւոյ: Ողջ լինել մաղթեմք քեզ 'ի Տեառնէ  
ընդ յամայր ամս. Ամէն:

Տուեալ 'ի 22 նոյեմբեր 1897 ամի և ըստ Տումա-  
րիւ ՌՅԻԷ. 'ի Հայրապետութեան մերում Ե. ամի.  
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վաղարշա-  
պատ Թ. 1233.

Մ Կ Ր Տ Ի Չ

Գաթուղիկոս Ամենայն Հայոց.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նախընթաց հայրապետական կոնգակէն կը տեսնուի որ երկու տարւով յառաջ որոշուած էր սոյն կրօնաթերթ վերակենդանացնել. սակայն այլ եւ այլ պատճառներ, որոց թուումն աստ ընթերցողաց համար հետաքրքիր չէ կարող լինել, հազիւ հազ ներեցին այժմ սոյն աստուածահաճոյ գործի սկզբնաւորութեան:

Քրիստոնէութիւնն յառաջադիմող կրօն մի է. նա պէտք է միշտ յարձակի, արշաւէ, յառաջադիմէ. նորա համար դադար եւ անշարժութիւն մահաբեր են. ապա թէ ոչ կը նեխի, կը փտի եւ կը յետադիմէ. օտար ոյժերէ յարձակում կը կրէ, եթէ ինքն չը յարձակի: Աւետարանի քարոզութիւնն այս օր նոյն է ինչ որ էր յաւուրն Պենտէկոստէի, եւ նոյն առաքելական ճանապարհաւ պիտի կատարուի, եթէ յաշտութիւն կ'ուզուի: Յամենայն դարու առարկողներ կը գտնուին, եւ զարմանալի չէ եթէ նաև յելս ինն եւ տասներորդ դարու առարկողներ գտնուին, որ նիւթապաշտ ժամանակի ու մարդոց անյարմար գտնեն Աւետարանի քարոզութիւնն: Աւելի լաւ չէ՞, պիտի ասեն, որ ուրիշ առարկայից վերայ, կենաց հետ սերտ առնչութիւն ունեցող շօշափելի, այսինքն, պարզ նիւթական, խնդրոց վերայ, խօսուի ու գրուի: Երբ Մարիամ Յիսուսի ոտներն կ'օժէր « իւզով նարգեան ագնուի մեծագնոյ, » Յուգա Իսկարիովտացի, որ Յիսուսի աշակերտութեան նիւթական օգուտներն աւելի լաւ ըմբռնած էր քան զհոգեւորն եւ զբարոյականն, կ'առարկէր. « Ընդէ՞ր ոչ իւզդ այդ վաճառեցաւ երեք հարիւր գինարի եւ տուաւ աշքատաց: » Առաքելական դարու մէջ եւս մարդիկ կը ծաղրէին եւ կը հալածէին Քրիստոսի Աւետարանն: Դատարկասէր եւ դատարկախօս Աթենացիք Ս. Պաւլոսի քարոզութիւնն օտարոտի եւ օտարացուցիչ իմն կը համարէին եւ միայն ժամանցքի համար կուզէին « գիտել թէ զինչ կամիցի այս լինել: »

Բայց ի՞նչպէս վարուեցան մեր առաքելական նախորդք: Միթէ խոնարհեցա՞ն կամ համակերպեցա՞ն իւրեանց դարու նիւթապաշտ եւ անհաւատ ոգւոյն. միթէ քաշուեցա՞ն ճշմարտութիւնն բացարձակ հռչակելէ, կամ վախեցա՞ն թէ մի գուցէ ժողովրդեան համակրանքը չը շահին, կամ միթէ աշխատեցան մարդահաճոյ քան աստուածահաճոյ լինել: Քաւ' լիցի: Գիտնալով այն մեծամեծ անձնական վտանգներն

ու մշտաներն որոց կ'ենթարկէին զինքեանս, արիութեամբ քարոզեցին ինչ որ Փրկիչն աւանդած էր նոցա. եւ 'ի գործ գրին այն բոլոր արտաքին միջոցներն որ այն ժամանակի մէջ ընդունուած էին, առանին եւ հրապարակային քարոզութեամբ, ճանապարհորդութեամբ եւ նամակագրութեամբ :

Տարակոյս չկայ որ եթէ Առաքեալք մեր գարու մէջ ապրած լինէին, իւրեանց նպատակին հասնելու համար այն բոլոր միջոցներն 'ի կիր կ'առնուին եւ այն բոլոր դիւրութիւններէն կ'օգտուէին որ ներկայ ժամանակի լուսաւորութեան յատուկ են : Միթէ կարելի՞ է երեւակայել որ Առաքեալք տպագրութեան սքանչելի արուեստն իւրեանց քարոզութեան ամենագորաւոր գործիքը չը շինէին : Արդէն յայտնի է թէ Ս. Եկեղեցին որքան օգտուած է այդ արուեստէն բազմաթիւ հրատարակութեամբք Ս. Գրոց եւ բանից եւ երկոց առաքելական սուրբ հարց եւ վարդապետաց : Մասնաւորապէս մեր չքաւոր ազգի եւ եկեղեցւոյ համար մեծ պարծանք է որ տպագրութեան գիւտի գրեթէ սկիզբէն մինչեւ ցարդ հայ լեզուաւ տպագրեալ մատենից անհամեմատ մեծագոյն մասն յօգուտ եւ 'ի պայծառութիւն եկեղեցւոյ նուիրեալ է : Եւ եթէ կայ մի բան որ մոռատանջութիւն պիտի պատճառէ մեր եկեղեցւոյ պաշտօնէից, այն է որ գէթ 'ի մասին պարբերական հրատարակութեանց մեր եկեղեցին կարօտ մնացած է, մինչդեռ աշխարհական թերթեր ու հանդէսներ մեր ազգի սակաւութեանը նայելով կարի յոյժ բազմացած եւ ճոխացած են : Մամուլն փոքր 'ի շատէ մի ոյժ եւ զօրութիւն կը կազմէ արդէն մեր ժողովրդոց մէջ՝ բայց մեր եկեղեցին մինչ ցարդ լրջութեամբ խորհած չէ մամուլի այդ զօրաւոր միջոցը գործ ածել իւր հոգեւոր շահերը պաշտպանելու եւ տարածելու համար : Այսինքն, ասել կուզեմ, մեր մէջ չկայ մի պարբերական թերթ որ բոլորովին նուիրուած լինի Ս. Աւետարանի ծառայութեան, քրիստոնէութեան վերաբերեալ՝ պարբերաբար յերեւան եկող խնդիրներ պարզել, մեր հաւատոյ ամենակարեւոր մասերն ժամանակ առ ժամանակ բացատրելով ու կրկնելով՝ տարրացնել ժողովրդեան մտաց վերայ, քրիստոնէական վարուց եւ բարեպաշտութեան հրահանգներ տալ եւ այլ սոյնպիսի հրատարակութեամբք գործել վասն մանկանց եկեղեցւոյ զոր ինչ առաքեալք կը գործէին իւրեանց ժամանակի հաւատացելոց համար մասամբ հրապարակային քարոզութեամբ եւ մասամբ թղթակցութեամբ : Այս պա-

կասն լցուցանելու գիտմամբ ձեռնարկուեցաւ յաճի 1888 «Եկեղեցի Հայաստանեայց» թերթի հրատարակութեան, եւ փորձով տեսնուեցաւ որ հայ ժողովուրդն իրապէս կըզգար մի այդպիսի հրատարակութեան պէտքն: Ինչպէս յայտնում թերթի սկզբնաւորութեան, նոյնպէս եւ այժմ նորա վերակենդանութեան գլխաւոր քաջալերութիւնն Ազգիս վեհափառ Հայրապետէն կը գայ, որոյ հրամանաւ եւ օրհնութեամբ կը հրատարակուի:

Առ այժմ ոչ խմբագրութեան եւ ոչ հրատարակութեան պարագաները կը ներեն ըստ առաջնոյն իբրեւ շարքաթաթերթ հրատարակելու ստի պէտք է ներկայ փոքր ծաւալովն իբրեւ ամսաթերթ շատանալ մինչեւ Տէր տացէ յաջողութիւն ընդարձակելոյ:

Հրատարակութեանս նպատակն միմիայն կրօնական լինելով, քաղաքական որ եւ է ակնարկութիւն կամ մեր սուրբ կրօնին չը վերաբերող որ եւ է գիտողութիւն թերթիս սահմանէն դուրս պիտի նկատուի:

Իսկ դուք, պատուական հարք եւ եղբարք ՚ի Քրիստոս, որք կոչուած էք հովիւք կամ հովուապետք լինելու սուրբ Լուսաւորչի վարատեալ հօտին, դուք որք առաքելական ձեռնադրութեամբ դէտ եւ վերակացու կոչուած էք հօտին Քրիստոսի եւ Տան Տեառն, եւ յանձն առած էք ձեր կեանքն նուիրել այդ սուրբ կոչման, դուք անշուշտ շատ աւելի լաւ կը հասկանաք եւ կը տեսնէք այն չարիքն որոց դարման տանելու նպատակ ունի սոյն հանգէս: Դուք քաջ գիտէք որ մեր եկեղեցին այսօր դեռ աւելի աննախանձելի դրութեան մէջ է քան թէ այն ժամանակ երբ Մովսէս Խորենացի արտասուօք կը հառաչէր: «Ողորմիմ քեզ եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ ՚ի բարեզարգութենէ բեմբին, ՚ի քաջէն զրկեալ հովուէ եւ հովուակցէ: Ոչ եւս տեսանեմ զբանաւոր քո հօտ ՚ի վայրի դալարեոջ եւ առ ջուրս հանգստեան տածեալս, եւ ոչ ՚ի փարախ հաւաքեալ՝ զգուշանալով ՚ի գայլոց, այլ ցրուեալս անապատաց եւ դահավիթութեանց:» Մեղմէ իւրաքանչիւր մին իւր չափովն պատասխանատու է առաջի Աստուծոյ այս եղկելի վիճակին համար, եթէ չաշխատի իւրովսանն դարման տանել այս ամենայն չարեաց, Քրիստոսի պատուական հօտն վերստին առաջնորդել ՚ի վայրի դալարեոջ եւ առ ջուրս հանգստեան, Քրիստոսի արեամբ պնեալ այդ սուրբ հօտի ցրուեալ անդամներն յանապատաց եւ ՚ի գահավիթութեանց վերստին հաւաքել

'ի փարախն՝ զգուշանալով 'ի գայլոց :

Այն ախուր ժամանակ երբ մեր Քերթողահայրն կ'ողբար մեր ազգի ու եկեղեցւոյ գրութիւն, եւ շատ զարեր եւս յետ այնորիկ, լաւ կամ գէշ, մեր հոգեւորականութիւնն էր որ իրապէս կ'առաջնորդէր ոչ թէ միայն կրօնական եւ հոգեւոր մասին, այլ նաեւ ընդհանուր մտաւոր զարգացման եւ կրթութեան մէջ: Քաղաքական եւ աշխարհական ասպարէզներու մէջ փայլող հանճարների հետ կը փայլէին նաեւ եկեղեցական հանճարներ իւրեանց գիտութեամբ, բարեպաշտութեամբ եւ Աւետարանի ոգւով, որովք կ'առաջնորդէին զնախահարս մեր առաւել կամ նուազ յաջողութեամբ 'ի նաւահանգիստն բարեաց: Իսկ մեր ներկայ վիճակ ինչ՞ է: Կը տեսնեմք որ մեր ժողովուրդ իւր հոգեւորականներէն աւելի յառաջ գնացած է մտաւոր զարգացմամբ: Փ'առք Աստուծոյ: հայ ազգի հանճարն ամեն դարու մէջ, ամեն աստիճանի ու վիճակի մէջ, փայլած է. եւ ինն եւ տասներորդ դարն ոչ ինչ նուազ ապացոյցներ եւ օրինակներ կարէ յառաջ բերել հայազգի մասց կորովոյ գերազանցութեան. քաղաքական, ընկերային, արուեստագիտական, առեւտրական, եւ ուսումնական ասպարէզներ իւրեանց պատկառելի հայ ներկայացուցիչներ ունեցած են ներկայ դարուս լուսաւորութեան եւ յառաջգիմութեան մէջ: Բայց հոգեւորականութիւնը կարող եղած չէ ժողովրդեան հետ երթալ ընթանալ, նոցա առաջնորդել որպէս ի հնումն: Շատ զարեր անցած են յորմէ հետէ մեր վերջին եկեղեցական հանճարն փայլեցաւ: Մենք այսօր հիացմամբ եւեթ կը յիշենք մեր երանաշնորհ եկեղեցական նախնեաց գործերն. բայց կը մոռանամք որ մենք եւս նոցա պէս մարդիկ եմք, մենք եւս նոյն առաքելական ձեռնադրութեամբ կոչուած եմք 'ի պաշտօն Աստուծոյ, մենք եւս նոյնքան ունիմք Ս. Հոգւոյն շնորհքն եւ զօրութիւն որքան նոքա, եւ մենք զեռ լուսաւորեալ եւ յառաջագէժ դարու առաւելութիւնները կը վայելեմք զոր նոքա չունէին: Ինչ՞ու համար մեզ անհաւատալի եւ գրեթէ ասելն իսկ ամպարշտութեւն կը թուի, որ մեր մէջ եկեղեցականներ ունենամք նման Մեծին Ներսէսի, կամ Սրբոց Թարգմանչաց, կամ Պրիգորի Նարեկացւոյն, եւ կամ Շնորհալուոյն: Այսու ամենայնիւ թող չը կարծէ ընթերցողն թէ բոլորովին զուրկ եմք արժանաւոր եւ աստուածային ոգւով լցուած եկեղեցականներէ: «Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ

սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, » անխնամ թողած չէ իւր Հայաստանեայց սուրբ հօտն, եւ առանձնութեան մէջ կամ առանց աղմուկի եւ ազազակի աշխատող աստուծամերձ արանց ձեռօք կը տնտեսէ իւր եկեղեցին եւ կը մշտնջենաւորէ Ս. Հոգւոյն շնորհքն: Աստուծոյ նախախնամութեան բաժինը չէ որ կը պակասի մեր եկեղեցիէն, այլ մեր գործակցութեան բաժինն է որ չի երեւիր, եւ այդ պատճառաւ է որ յեւս ինն եւ տասաներորդ դարու մեր արդէն այլապէս նուազեալ ազգի մէկ ստուար մասն անջատեալ կը գտնեմք մայրենի եկեղեցիէն, իսկ մնացեալներէն ոչ ինչ նուազ կարեւոր մասն մատնուած է գործնական անկրօնութեան եւ անտարբերութեան: Մինչդեռ բազմաթիւ գրական միջոցներով, դպրոցներով, լրագրութեամբ եւ այլն աշխարհային իրաց մէջ մեր ժողովուրդը յառաջադիմել կը ձգտի, ամենէն նուազ ուշադրութեան կ'արժանանայ մեր սուրբ կրօն եւ մեր սուրբ եկեղեցին: Եթէ հոգեւորականքս չաշխատինք այս անհրաժեշտ պէտքը լցուցանել, մի՞թէ սպասելու է որ աշխարհականք առաջնորդեն մեզ յայսմ:

Ուստի պատուական սուրբ հարք եւ եղբարք, ձեր օժանդակութիւնը մի խնայէք սոյն բարենպատակ ձեռնարկութենէն, որ ձեր գործն է. ձեր հօտին, ձեր պաշտօնին, ձեր անձին ու ձեր հոգւոյն հետ ամենասերտ առնչութիւն ունի: Մասնաւորապէս դուք որ Աստուծոյ ողորմութեամբ Ս. Աւետարանը քարոզելու կոչումն ու ձիրքն ունիք, եւ միայն մի սահմանափակ ժողովրդեան կը քարոզէք, հաճեցէք սակաւ ինչ նեղութիւն յանձն առնուլ՝ խնամով գրել ինչ որ ձեր ժողովրդեան կամ ձեզմէ հեռու գտնուող մանկանց եկեղեցւոյ հոգեւոր օգտի համար կ'ասէք եւ կամ ասել կ'ուզէք, եւ ղրկեցէք 'ի հրատարակութիւն կրօնաթերթիս մէջ: Յաճախ կրօնական կամ կէս կրօնական բնաւորութիւն ունեցող խնդիրներ ժողովրդեան ուշադրութիւնը կը գրաւեն եւ լրագրաց մէջ կը գրուին աշխարհականաց կողմէ, որք շատ անգամ կրօնական տեսակէտն յակամայիցս զանց կառնեն. ինչու՞ համար հոգեւորականք լուռ միան յայսպիսի դէպս. ինչու՞ համար ճշմարտութիւնն ինչպէս ինքեանք ընդունած եւ համոզուած են՝ չը հոշակեն, թիւրիմացութիւններ չը փարատեն, յուզիղն եւ ի բարին չը քաջալերեն եւ չը խրախուսեն: Որքան թերթիս ծաւալը կը ներէ որոշուած է աստուածաբանական գիտնական յօդուածոց հետ

մէկտեղ կրօնի գործնական մասին խորին ուշադրութիւն դարձնել: Առ այս իւրաքանչիւր թիւ պիտի պարունակէ մեր Եկեղեցւոյ կենդանի հարց կողմանէ խնամքով պատրաստ ուած մէկ քարոզ, եւ միայն երբ այդպիսի աղբիւրներէ չկարենայ ձեռք բերել իւր ցանկացածն, պիտի ստիպուի խմբագրութիւնն իւր աղքատիկ գանձարանէն նուիրել ինչ որ գտնէ: Նոյնպէս կրօնական դաստիարակութեան վարժ եւ փորձառու քահանայ մի յանձն առած է իւրաքանչիւր ամսական թուոյն համար պատրաստել քրիստոնէական մի հրահանգ Նոր Կտակարանի պատմութեան վրայ, կամ աւելի լաւ, մեր Փրկչի կենաց եւ վարուց վրայ, հանդերձ պատշաճ խրատականներով, որով վստահ եմք թէ մեծապէս պիտի օգտուին կրօնի ուսուցիչք, որք շատ անգամ չոր ու ցամաք հարց ու պատասխաններէ զատ՝ չը գիտեն թէ ինչպէս արմատացնեն կրօնի կենդանութիւնն՝ ի միտս մանկուոյն հետաքրքիր եւ մանկական մտաց յարմար եւ ազգու խօսքերով եւ օրինակներով: Սոյն գասերն, որ յաջորդ թիւէն պիտի սկսին, կարեն գործածուիլ նաեւ իբրեւ ծրագիր ժողովրդական պարզ քարոզութեանց:

Ս. Գրոց ուսումն, եկեղեցական պատմութիւնն, եկեղեցական օրէնք, ծէսք եւ արարողութիւնք, ՚ի մի բան, ամեն ինչ որ Գրիստոսի Ս. Եկեղեցւոյն համար կարեւորութիւն ունի կամ նորա հետ առնչութիւն ունի, եւ մանաւանդ երբ մասնաւորապէս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն զարգացման եւ յառաջդիմութեան կարէ ծառայել՝ կրօնաթերթիս մէջ տեղ կը գտնէ:

Մանչեսթըր, Ապրիլ 1900

ԹՈՐՈՍ ՔԶ. Տ. Ի՝ ՋՈՒՂԱՅԵՏԻ

Վ. Ա.

## ԱՐԱՆԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ

Սոյն վերնագրի ներքոյ պիտի նկարագրեմ մեր եկեղեցւոյ պատմութեան այն դէպքեր որ ամենէն աւելի կարեւորութիւն ունեցած են նորա գոյութեան եւ հաստատութեան համար, եւ որ հետեւաբար ամենէն աւելի հետաքրքիր եւ սիրելի լինելու են հայ ժողովրդեան: Ասելիքս մի նոր բան չէ, ոչ եւս նորագոյն պատմական հետազոտութեանց արդիւնքն պիտի հաղորդեմ ընթերցողիս: Այլ մեր եկեղեցւոյ հին եւ արդէն ծանօթ դէպքերը պիտի կրկնեմ. եւ կը հաւատամ որ ինձպէս շատեր կը սիրեն այն հին եւ մեզ համար անգին եղող անցեալ դէպքերը յաճախ կրկնել եւ իւրեանց մտաց մէջ որոճել: Աւանդութիւն կը կոչեմ, որովհետեւ ինչ որ մեր եկեղեցին մինչ ցարգ մեզ աւանդած է՝ զայն պիտի պատմեմ. ոչ թէ նորա համար որ իբրեւ եկեղեցական պարտիմ եկեղեցւոյ աւանդութեանց կուրօքէն հետեւիլ, այլ նորա համար որ մեր եկեղեցւոյ աւանդութեան կը հաւատայի քահանայանալէս շատ առաջ, եւ ձեռնադրութիւնս եւ տարեաց ընթացքն առաւել եւս ամրացուցած եւ հաստատած են զայն հաւատ՝ պատմական անժխտելի փաստիւք եւ վկայութեամբք:

### ՆԱԽԿԻՆ ԿՐՕՆ ՀԱՅՈՑ.

Այժմեան ժամանակի բոլոր գիտնական հետազոտութիւնք մինչ ցարգ անկարող եղած են ժխտելու՝ ՚ի Ս. Գրոց վկայեալ եւ հաստատեալ այն ճշմարտութիւն թէ մեր հայրենիք եղած է մարդկային ազգի ծննդավայրն եւ խանձարուրն. եւ անտի սկսած եւ ծագած է ինչ որ մարդկային սեռին կը պատկանի. կրօն, լուսաւորութիւն, յառաջագիմութիւն այլովքն հանդերձ: Նոյն իսկ երբ եւրոպացի բանասէրք անկարող կըզգան Ս. Գրքէն զուրս ուրիշ վկայութիւն գտնել առ այդ, զարձեալ կը վկայեն թէ մարդկային ազգի բնագաւառն այն կողմերը փնտռելու է ուր դարբերէ ՚ի վեր մեր ցեղի բնակավայր ճանչցուած է: Սակայն մեզ համար ուրիշ փաստի պէտք չկայ, քանի որ գիտեմք ՚ի Ս. Գրոց թէ ճշմարիտ աստուածպաշտութեան կրօնն կը փայլէր անգ առ ստորոտով Այրարատայ, ուր զառաջինն զինի ջրհեղեղին Նոյ նահապետ կը մատուցանէր իւր աստուածահաճոյ ողջակէզ նորակառոյց սեղանին վերայ, որ այնքան սիրելի եղաւ Աստուծոյ մինչև Ս. Գիրք այդ աստուածային հաճութիւն

զգալի օրինակաւ բացատրելու համար կ'ասէ, «եւ հոտոտեցաւ տէր Աստուած, ի հոտ անուշից:» Եւ արդէն նոյեան տապանի արարատեան լերանց վերայ հանդչիլն ըստ ինքեան խորհրդաւոր նշան մի էր որ մարդկային ազգի փըրկութեան գործն այդ վայրէն պիտի սկսէր: Հայաստանի լեռներն ու դաշտերն եւ նոցա առաջին բնակիչներն էին որ զառաջինն ստացան աստուածային օրհնութիւն փոխանակ առաջին անիծից. «Ոչ եւս յաւելից անիծանել վերկիր վասն գործոց մարդկան. . . այսուհետեւ զամենայն աւուրս երկրի սերմն եւ հունձք:» Աստուծոյ հաշտութեան եւ դաշնադրութեան կամարն՝ եօթնարփեան ծիածանն զառաջինն հայկական լերանց վերայ — թերեւս Մասիսի ծայրէն կամարածեւ բարձրանալով Արագած լերանց ետեւն անցնելով — կը շողար. եւ մեր երկրի առաջին բնակչաց կ'ասէր Աստուած. «Այս է նշան ուխտին զոր ես տաց ընդ իս եւ ընդ ձեզ. . . զաղեղն իմ եդից յամպս, եւ եղիցի ՚ի նշանակ յաւիտենական ուխտին. . . երեւցի աղեղն իմ յամպս, եւ յիշեցից զուխտ իմ որ ընդ իս եւ ընդ ձեզ:»

Թէ մեր առաջին նախնիք աստուածային սոյն անդրանիկ սիրոյ եւ խնամարկութեան ինչ աստիճան հաւատարիմ մնացին՝ այն հին պատմութեան չգոյուցիւն մեզ չի թողուր ստուգիւ իմանալ: Սակայն կարի հաւանական կը թուի որ ՚ի Հայս մնացող ապրող Նոյի սերունդք եւ յաջորդք նուիրական աւանդութեամբ չըջապատեալ՝ առաւել կամ նուազ հաւատարմութեամբ պաշտեցին զբարձրեալն ըստ օրինակի նախածօրն իւրեանց Նոյի: Առաւել եւս հաւանական կը թուի այս եւ գրեթէ կը հաստատուի, երբ զինի երկու հազար ամաց կը տեսնենք որ հայոց ազգն տակաւին Աստուծոյ սիրելի փողովուրդ մի է, եւ աստուածային պատգամ ընդունելու եւ աստուածային հրամաններ գործադրելու կ'արժանանայ, երբ իւրայեւեան ցեղի բարեկական գերութեան միջոցին Երեմիա մարգարէ երկնային հրամանը կը հռչակէ. «Առէք նշան ՚ի վերայ երկրիդ, փող հարէք ընդ ազգս ամենայն, պատուէր տուք յինէն այրարատեան թագաւորութեանցն եւ ասքանաղեան գնդին:» Տարակոյս չկայ որ եթէ տյրարատեան թագաւորութիւնք եւ ասքանաղեան գունդն, — որ հաւանօրէն Հայաստանի այլ եւ այլ նախարարութեանց կամ գաւառաց կ'ակնարկէ, — երկիւղած եւ աստուածապաշտ փողովուրդ չը լինէին, ոչ Աստուած սոյն պատգամը կը զրկէր նոցա, ոչ եւս նոքա փոյթ պիտի տանէին բարեկա-

ցւոց դէմ պատերազմելու եւ յանուն ճշմարտին Աստուծոյ զնոսա պատժելու : Մեր ազգային հնագոյն ականդութիւն Հայկայ ապստամբութեան եւ Բելայ դէմ մղած պատերազմի սկզբնապատճառն զայն կը համարի որ « Հայկ ոչ պաշտեաց զպատկերն Բելայ, այլ խրախուսեալ յԱստուած՝ սատակեաց զնոյն ինքն զկենդանին Բէլ զառաջն » րդն պատկերապաշտութեան : » Այս պատճառաւ մեր ազգի Հոմերոսն եւս սոյն աստուածային շարժառիթն կը թելադրէ երբ յաստուածակոյս կողմանէ կը հրամայէ պառգամաւոր հրեշտակին .

“ Եկ երբ պատգամ 'ի Յայկաջն' առ Թորգոմասնն իմ սիրելի.

Ոչ ես այլ հանդուրժն երկինք վրիժուցրս հատուցման,  
Փուքսցի յոր մեքս եղաք գործ քաջուքեան 'ի սիրտ նորա : ”

Բայց եթէ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն՝ որդիքն Իսրայելի, այն բոլոր երկնային հովանաւորութեամբ եւ առաջնորդութեամբ հանդերձ զոր նոքա կը վայելէին՝ ի ձեռն Մովսիսի եւ մարգարէից, դարձեալ ժամանակ առ ժամանակ կը զառածանէին ուղղութեան ճանապարհէն եւ կռապաշտութեան շար օրինակ կ'առնուին նոյն իսկ այն ազգերէն յորոց բոլորովին հեռի մնալու խիստ պատուէր եւ դիւրին միջոց ստացած էին, ուրեմն որքան առաւել հայ ժողովուրդն ենթակայ էր հեթանոս ազգաց օրինակին հետեւելու փորձութեան, որոց հետ սերտ յարաբերութեան մէջ մնալու ոչ թէ միայն կրօնապէս կամ ուրիշ պատճառաւ արգելուած չէր, այլ իւր աշխարհագրական եւ քաղաքական վիճակը կը պահանջէր եւ անհրաժեշտ կը կացուցանէր ամենամերձ յարաբերութիւն գրացի ազգաց հետ, որոց, ինչպէս քաղաքական եւ ընկերային նոյնպէս եւ կրօնային, յատկութիւններէ կ'օգտուէր ու կ'ազդուէր : Մենք կը տեսնեմք որ գրացի ազգաց լեզու, գրականութիւն, քաղաքական վարչութիւն, ընկերային կարգ ու կանոն, արուեստ եւ վաճառականութիւն, իւրաքանչիւրն իւր չտիրույն ու կարեւորութեամբն մեր նախնեաց մէջ ընդունելութիւն գտած է : Հետեւաբար զարմանալի չէ որ նոցա կրօնական գրութիւններ եւս ժամանակին մուտ գտած են եւ 'ի հայոց ընտրանօք ընդունուած կամ յարմարցուած են : Սակայն այսու ամենայնիւ մեր նախնեաց հեթանոսական կրօն վսեմութեան եւ ազնուութեան մի տիպ կը կրէ որ ուրիշ ազգաց կրօնից մէջ դուռն ուրեք կը տեսնուի, եւ միեւնոյն ժամանակ համեմատաբար զերծ է այն մեծամեծ չարիքներէն եւ կրօնական խոշոր զեղծումներէն որ մերձակայ ազգաց

մէջ կանոնն էր: Հնագոյն դարուց մէջ մեր նախնեաց երկրպագութեան եւ հիացման առարկայ եղած էին արեգակն ու լուսին եւ երկնային լուսաւորք, յորս ամենէն աւելի եւ զգալի կերպիւ կը փայլի «կարողութիւն եւ զորութիւն եւ փառք» այնորիկ որ է գերազանցօրէն «լոյսն ճշմարիտ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ:» Եւ երբ առաւել նիւթական եւ շօշափելի եւ աչօք տեսանելի առարկայներ պաշտելու բաղձանքն զնոսա բռնադատեց 'ի կռապաշտութիւն, դարձեալ հայկական աստուածներ բարուց եւ վարուց, ճշմարտութեան եւ առաքինութեան, գերագոյն օրինակ եւ խրատ կը դնէին առաջի երկրպագուաց իւրեանց: Արին Արամազդ, որ 'ի սկզբան անտեսանելի էութիւն մի էր եւ առանց ձեռագործ կողոյզ կը պաշտուէր, կը համարուէր իբրեւ «արարիչ երկնի եւ երկրի եւ հայր դիցն ամենայնի:» Նմա կը վերագրէին աշխարհիս խնամարկութիւն, որոյ շնորհիւ կը լինէր լիութիւն պարարտութեան երկրի: Բոլորովին անձանօթ էր հայոց՝ այն աղտեղի եւ խայտառակ աւանդութիւններն որով յոյնք իւրեանց նոյնանուն աստուածոյն պատմութիւնը ճապաղած էին: Մինչդեռ յունաց առասպելք իւրեանց պիղծ Արամազդայ բազմաթիւ պղծագոյն զաւակներ կ'ընծայէին, մեր նախնեաց դիցաճօր դուստրն էր « մեծ տիկինն Անահիտ որ է փառք աղբիս մերոյ եւ կեցուցիչ, մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան եւ ծնունդ մեծին Արին Արամազդայ, որով (Անահիտաւ) կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց:» Արամազդայ երկրորդ դուստրն Նանէ հռչակաւոր էր իբրեւ մայր իմաստութեան, արիութեան եւ ճարտարութեան, որոյ բարի յատկութիւնք, կը զբէ մի եւրոպացի հեղինակ, հայագրի կանայք մինչեւ ցայսօր ժառանգած կը թուին: Միւր՝ միակ որդի Արամազդայ, դաշանց եւ ուխտից պահպան աստուածն էր, որ ուխտադրութիւնն եւ խոստմնագրանցերը կը պատժէր, եւ հաւատարմութեան եւ պայմանաց գործադրութեան նախանձախնդիր վերակացուն էր: Ուրիշ դիւցադուներ եւս կը պաշտուէին, որք այլ եւ այլ բարի եւ առաքինի յատկութեանց նշանակիչք էին: Բայց եւ այնպէս տեղ տեղ օտարներէ փոխ առած յոռի գաղափարներ եւս մուտ գործած էին հայոց դիցապաշտութեան մէջ, եւ յիշատակութիւնն ունիմք Աստղկան, որ հեշտութեանց գարչելի չաստուածն համարուած էր, որում նուիրեալ Վահե-

վահեան տաճարն 'ի Յաշտիշատ Ս. Գրիգոր կործանեց, եւ նոյն իսկ «մայր ամենայն զգաստութեանց» համարուող Անահտայ տարեկան տօնախմբութիւնն սկսած էր մի ժամանակ անբարոյական արարողութեամբ կատարուիլ: Ս. Լուսաւորչէն շատ տարիներ յառջ Հայոց հեթանոսութիւնն իւր մահուան հարուածն ստացած էր, երբ Եգեսիոյ Արգար թագաւորն 'ի Քրիստոս հաւատաց եւ մեր Փրկչի առաքեալք՝ Թադէոս եւ Բարդուղիմէոս, Հայոց աշխարհն արշաւեցին եւ Ս. Աւետարանի լուսաւոր քարողութեամբն մերժեցին զխաւար կռապաշտութեան, եւ զէթ մասամբ իմն սկսան լուսաւորութեան այն մեծ գործն որ միայն երեք դար յետոյ լիովին կատարեցաւ Ս. Գրիգորի ջանիւք եւ Տրդատայ հաւատալովն:

### ԴԱՐՉ ԱԲԳԱՐՈՒ.

Քրիստոսի ծննդեան միջոցին Հայք նոր ազատուած էին հռովմայեցոց բռնակալութենէ որք Անտոնինոս կայսեր առաջնորդութեամբ ամբողջ Հայաստան արշաւելով Արտաւազդ թագաւորն ձերբակալած եւ երկիրը բոլորովին հռովմէական իշխանութեան ներքոյ դրած էին: Սակայն Անտոնինոսի մահուամբն այս բռնութիւն առ ժամանակ մի բարձաւ, եւ Արտաւազդայ հօրեղբայրն Արշամ՝ Պարսից Արշաւիր թագաւորի ձեռնտուութեամբ 'ի Հայս գտնուած հռովմայեցի զօրքը բնաջինջ արաւ, եւ իւր նախնեաց իշխանութիւն վերահաստատեց Սսորին Հայաստանի մէջ, որով վերին Հայք Պարսից ազդեցութեան ենթարկուեցաւ: Շատ դժուար է այն հին ժամանակի պատմական դէպքերն լաւ ըմբռնել, երբ երկիրներ ..ւ գաւառներ յաճախ եւ արագ արագ իւրեանց տէրեր կը փոփոխէին, եւ այսօրուայ հայկական համարուած գաւառն մէկ քանի ամիս վերջ պարսկական կամ հռովմէական երկիր կարէր դառնալ, որ փոխադարձաբար կարէր նոյնքան շուտով մի ուրիշ պետութեան կամ նոյն իսկ իւր նախկին տիրոջ իշխանութեան ենթարկուիլ: Այս է պատճառն որ մեր եկեղեցական պատմութեան համար մեծ կարեւորութիւն ունեցող Եգեսիա քաղաքի եւ գաւառի վարչութիւնն երբեմն ասորոց կը վերադրուի, երբեմն պարսից եւ երբեմն հռովմայեցոց, միչդեռ մեր ազգային աւանդութիւն իբրեւ հայկական պետութեան մի մասն կը ճանաչէ զայն եւ նորա իշխանն՝ Արշակունեաց

զարմէն Արշամայ որդի Արգարն կը համարի: Մեծին Աղբ-սանդրի աշխարհակալութեան շնորհիւ յունական կրթութիւն եւ գիտութիւն բաւականին տարածուած էր Միջագետաց մէջ եւ մասնաւորապէս Եդեսիա կեդրոն էր որպէս ուսմանց եւ գիտութեանց նոյնպէս եւ քաղաքական վարչութեան: Օտար պատմիչներէ կետեղեկանամք որ Եդեսիոյ կառավարութիւն աւելի հանրապետական կազմութիւն ունէր քան թէ ժառանգական իշխանութիւն: Այսինքն, քանի որ այդ երկրի մէջ այլ եւ այլ յոյն, հայ եւ ասորի ցեղեր կը բնակէին, նոցա իշխանն կամ թագաւորն եւս այդ խառն ցեղերէն արժանաւորագոյնը կընտրուէր, առանց խտրութեան ազգի, սերունդի եւ աստիճանի, կամ կրօնի եւ դաւանութեան: Նաեւ սովոր էին եղեսացիք մերձակայ երկիրներէն արժանաւոր իշխան մի ընտրել իւրեանց թագաւոր: Երեւի այս սովորութեան համեմատ Արգար որդի Արշամայ, որ անձնական արժանեօք լի էր եւ միանգամայն հայկական գահի յաջորդ եւ ժառանգն էր, ընտրուեցաւ Եդեսիոյ իշխան, որով միացոյց իւր հին ժառանգութիւն նոր ստացածին հետ: Երեւի այս պատճառաւ Արգար Արշամայ երբեմն կը յիշուի իբրեւ ասորաց իշխան եւ երբեմն իբրեւ հայկազն եւ Հայոց թագաւոր: Շատ հաւանական է որ մեր ազգային աւանդութիւն՝ թէ Արգար հովմայեցուց ոչմ' ապստամբելու դիտամբ Եդեսիա նորոգեց եւ ամրացոյց՝ իւր աթոռը փոխադրելով անդր, այս ընտրութեան կ'ակնարկէ որով նորապսակ արքայն կ'աշխատէր իւր աթոռանիստ քաղաքն ամրացնել եւ պայծառացնել: Արգար իւր յարաբերութիւնն Մեծ Հայաստանի հետ չարունակեց, իւր քիռորդի Սանատրուկն կարգեց « իշխանաց իշխան եւ հրամանատար աշխարհին Հայոց, » եւ խրատով ու խորհրդով ձեռնտու եղաւ նմա: Թերեւս իրեն եւ իւր քեռորդուոյն վիճակուած ընդարձակ պետութիւնն միացնելու եւ զօրացնելու վեհ բաշձանքն եւս ունէր, եւ Հովմայ բռնակալութեան եւ խրոխտ վարմանց ժամանակաւ ոչմ' զնելու միտք եւս ունէր եւ կը պատրաստուէր: Սակայն տակաւին որ եւ է մի գործնական քայլ չառած, իւր գլխաւոր օգնական եւ դաշնակից՝ պարսից Արշաւիր արքայն կը մեռնի, եւ նորա զաւակաց մէջ անհամաձայնութիւն կը ծագի յաջորդութեան մասին: Արգար տեսնելով որ խռովութիւնն Պարսկաստանի մէջ օր ըստ օրէ կը սաստկանայ, կը պարտաւորի երթալ հաշտեցնել հակառակորդներն, եւ կարգ ու

կանոն եւ խաղաղութիւն վերահաստատել: Արշաւրի երեց որդին Արտաշէսն հօր տեղը դրաւ, եւ նորա հետ եւս խաղաղութեան դաշինք կապելով վերադարձաւ յԵդեսիա: Այս ճամբորդութիւն, ընդ նախախնամութեամբն Աստուծոյ, անուղղակի կերպիւ Աբգարու դարձի եւ ընդ նմին հայոց ազգի լուսաւորութեան պատճառ եղաւ: Չայս պատմութիւն ավանդած են մեզ՝ հայր եկեղեցական պատմութեան կոչուած Եւսերիոս Կեսարացի եւ մեր ազգի պատմահայր Մովսէս Սորենացի, որք իւրեանց տեղեկութիւն քաղած են Եդեսիոյ մէջ պահուած մի հին գրուածէ, հաւանօրէն այն որ մեզ ժամօթ է իբրեւ Լաբուրնիա կամ Դերուրնա, որոյ ասորական բնագիրն եւս (ժամանակին անգլիական թարգմանութեամբ հանդերձ հրատարակեալ) ստուգութիւնը կը հաստատեն:

Պարսկական ուղեւորութեան միջոցին Աբգար անբժշկելի ախտիւ, ըստ մեզ՝ բորոտութեամբ, հիւանդացաւ, եւ հակառակ իւր բոլոր ջանից եւ այն ժամանակի նշանաւոր բժշկաց բոլոր ճարտարութեամբ հանդերձ չկարողացաւ առողջանալ: Միեւնոյն ժամանակ Տիրերիոս կայսրն լսելով որ Աբգար գժտած է Պաղեստինի Հերովդէս արքայի հետ, եւ մինչեւ իսկ հռովմէական պետութեան դէմ պատերազմիլ կը խորհի եւ կը պատրաստուի, եւ մասնաւոր կերպիւ կասկածելով Աբգարու՝ ի Պարսկաստան ուղեւորելու նկատմամբ, թէ մի գուցէ պարսից հետ հռովմէացւոց հակառակ դաշինք զնելու նպատակ ունեցած է, յղեց զՄարինոս ոմն իշխան՝ ի Կեսարիա բազմաթիւ զօրօք, որպէսզի ասիական երկրաց դրութիւն քննելով իլրտմանց կամ ապստամբութեանց առաջն առնէ, եւ Հռովմայ հնազանդութեան ներքոյ պահէ հարկատու գաւառներն, եւ թոյլ չտայ որ դաշնակից ցեղեր անհաւատարիմ լինին: Աբգար այս ամենը տեղեկանալով, փութաց ինքզինքն արդարացնել եւ կայսեր սէրը շահել՝ երեք աստիճանաւոր անձերէ բաղկացեալ դեսպանութիւն մի, որոց մէջ էր նաեւ իւր հաւատարիմ սուրհանդակն Անանէ, առաքեց ի Կեսարիա առ Մառինոս իշխան՝ իւր հաւատարմութիւն ցոյց տալով եւ պարսից Արտաշէս թագաւորի հետ դրած դաշնագրոյն մէկ օրինակն ներկայացնելով՝ ըստ ամենայնի համոզեց զՄառինոս, որ պատուով եւ մեծարանօք արձակեց զդեսպանսն:

Իայց այս դեսպանութիւն մի շատ աւելի կարեւոր եւ նշանակալից արդիւնք եւս ունեցաւ քան թէ այն սոսկ քաղաքական

նպատակ որով Արգար յղեց զայն: Դեսպանք կը լսեն Քրիստոսի հրաշից եւ քարոզութեանց համբաւն, որ արդէն սկսած էր Պաղեստինոյ ամեն կողմը տարածուիլ, եւ իւրեանց ճանսպարհէն մի քիչ շեղելով՝ յերուսաղեմ կերթան տեսնելու այն մեծ մարգարէն, որոյ հռչակեալ բժշկական ձիրքեր, անշուշտ կը խորհին, կարէ իւրեանց արքային օգտակար լինիլ եւ թերեւս նորա իմաստութեւն եւ վարդապետութիւն իւրեանց համայն ազգին նպաստէ: Կը հանդիպին Փրկչին եւ ականատես կը լինին նորա հրաշից, որք լիովին կը հաստատեն նորա նկատմամբ տարածուած համբաւ, եւ թերեւս կը ցաւին որ իւրեանց արքային առանձին պատգամ չունին ներկայացնելու, ոչ եւս գիտեն թէ Արգար ինչ պիտի ասէ այդ մասին: Բայց եւ այնպէս լաւ կ'ուսումնասիրեն պարագաներն, Քրիստոսի քարոզելու, գործելու եւ ապրելու եղանակն, հրեայ աղքատ ժողովըրդեան հաւատն եւ բարձրագոյն դասակարգի ատելութիւնն: Դեսպանք յեղեսիա վերադառնալով՝ կը պատմեն Արգարին այս ամենն, որ կը հիանայ եւ միանգամայն կը հաւատայ:

Քրիստոսի ծնունդէն դարեր յառաջ այլ եւ այլ ազգաց մէջ մի տեսակ մարգարէական ակնկալութիւն կը տիրէր՝ թէ մի մեծ փրկիչ պիտի գայ աշխարհ: Հրէից ազգի պատմութեան սկիզբէն իսկ Մեսիայի գալստեան գուշակութիւնն ուղղակի եւ անուղղակի կերպիւ եղած էր. եւ որքան կը մօտենար այդ նշանաւոր կէտն ժամանակի, այնքան աւելի կը սաստկանար բողձանքն եւ ակնկալութիւնն Մեսիայի գալստեան համար: Հեթանոս ազգաց մէջ եւս այլեւայլ կերպերով գուշակուած էր: Հին պարսիկք որպէս եւ հռովմայեցի իմաստասէրք գիտէին եւ կըսպասէին նմա, որոյ իշխանութիւնը պիտի հաստատուէր ամենայն տիեզերաց վերայ: Մոգք յարեւելից որ եկին յերուսաղեմ աստեղ առաջնորդութեամբ եւ նորածին արքայի տեսութեան արժանացան եւ իւրեանց հաւատն այնքան առատածեոն եւ զգալի կերպիւ՝ ի հանդէս ածին՝ անշուշտ լուռ չմնացին երբ իւրեանց հայրենիք վերադարձան. եւ ո՛ր գիտէ թէ այդ մոգերն Միջագետէն եկած չէին եւ թէ նոցա պատմութեամբն Արգարու միտքն փոքր ՚ի շատէ պատրաստուած չէր այն լուրն ստանալու զոր իւր դեսպանք Պաղեստինէն դառնալով հաղորդեցին:

Այս ենթադրութիւն հաւանականութեան զօրութիւն կը ստանայ երբ կը տեսնեմք թէ ինչպէս Արգար առանց վարանելու՝ մի նոր դեսպանութիւն կը յղէ, այս

անգամ ոչ թէ հոռովմէական կայսեր ներկայացուցչին, այլ տիեզերաց Արարչին, որ մարմին զգեցեալ յաւիտենական փրկութիւն բերած էր աշխարհի: Արգար իւր նամակը կ'ուղղէ առ «Յիսուս փրկիչ, կամ ըստ Լաբուրնեայ, բժիշկ եւ բարերար,» եւ կը յայանէ թէ ինչպէս լսելով նորա բժշկութեանց եւ հրաշից լուրը՝ հաւատացած է թէ նա է Աստուած կամ որդի Աստուծոյ, եւ լսած լինելով նաեւ թէ հրեայք որոց համար կը գործէր այդ ամենայն բարերարութիւններ՝ ապերախտութեամբ կը փոխարինեն, կը հրաւիրէ զՓրկիչն յեղեսիա՝ նախ զԱրգար բժշկելու համար եւ ապա այն երկրին մէջ հաստատուելով՝ իւր երախտիքն տարածէ այն ազգի վերայ, որ գոհութեամբ պիտի լցուին եւ ամենայն սիրով պիտի կապուին նորա հետ: Փրկիչ պատասխանն զոր Եւսեբիոս եւ Խորենացի նամակի ձեւով առ Արգար ուղղեալ կ'աւանդեն՝ առ Լաբուրնեայ իբրեւ բերանացի տուեալ կ'աւանդուի, որ աւելի պատշաճ եւ հաւանական է: Թէ Արգարու գրած թուղթն եւ թէ Յիսուսի պատասխանն այնքան պարզ եւ բնական է, որ անկարելի է մի երկրորդական կամ ներքին նպատակ կասկածել այդ շարադրութեան մեջ: Յիսուս կը խօսի Արգարու սուրհանդակին հետ ինչպէս կը խօսի Ս. Աւետարանի մէջ. «Երանի է քեզ զի հաւատացեր յիս, մինչ չեւ տեսեալ քո զիս, զի այսպէս գրեալ է վասն իմ, զի որք տեսանենն զիս՝ ոչ հաւատան, եւ որք ոչ տեսանենն՝ հաւատացեն: Եւ զի գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ, վասն որոյ առաքեցայ ես յաշխարհ, կատարեալ է ամենայն. այսուհետեւ վերանամ ես առ հայր իմ՝ որ առաքեացն զիս. եւ յորժամ վերացայց առ հայր, առաքեցից առ քեզ մի յաշակերտաց իմոց, զի բժշկեսցէ զքեզ եւ զամենայն ժողովուրդ քո որ ընդ քեզ. եւ դարձուցէ զքեզ՝ ի կեանսն յաւիտենականս:»

Այս թղթակցութիւն կամ բանագնացութիւն՝ իմէջ Արգարու եւ Քրիստոսի արդարեւ բազմիցս կասկածանայ եւ երկմտութեան առարկայ եղած է այնպիսի անձանց կողմանէ որք կամ ընդհանրապէս սովոր են ամեն պատմութիւն եւ աւանդութիւն ժխտել եւ իւրեանց երեւակայութեան համեմատ նկարագրել, կամ Հայաստանեայց եկեղեցւոյ անկախ սկզբնաւորութեան այս գերազանց առաւելութեանը նախանձելով՝ զայն ժխտելու կամ գէթ տարակուսելու եւ կասկածի ենթարկելու միջոցներ կը փնտռեն: Կը բաւէ ասել որ թուով եւ կարեւորութեամբ շատ աւելի են եւրո-

պացի այն բանասէրք որ սոյն թղթակցութիւնն ըստ էութեան կը հաստատեն քան զայնոսիկ որք կը մերժեն: Արդարեւ Ս. Գրոց մէջ բացորոշ կերպիւ յիշուած չէ այս պատմութիւն: Բայց չպիտի մոռանամք Ս. Յովհաննու խօսքեր թէ «է եւ այլ ինչ բազում զոր արար Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըսա միովէ, կարծեմ թէ եւ ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն՝ որ թէ գրեալ էին:» Միթէ կարելի՞ է Աբգարու դարձի այս պարզ ու գեղեցիկ պատմութիւնն չը համարել 'ի թիւս մեր փրկչի աշխարհամած գործոց: Այսու ամենայնիւ ինքնացին Յովհ. ԺԲ. 20—22 կը նշանակէ Աւետարանի այն խօսքերն որով Աբգարու պատգամաւորաց կ'ակնարկուի, ուր կը կարգամք թէ «էին անդ ոմանք եւ հեթանոսք յելելոցն անդր զի երկիրպագանիցեն 'ի տօնին: Նոքա մատեանս սու Փիլիպպոս՝ որ 'ի Բեթսայիդայ գալիլեացւոցն էր, աղաչէին զնա եւ ասէին: Տէր, կամի՞ք զՅիսուս տեսանել: Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդրէաս. Անդրէաս եւ Փիլիպպոս ասեն ցՅիսուս:»

Ս. Սահակայ պարթեւի անուն կրող հին տօնացոյցք կը յիշատակին զայս թղթակցութիւն եւ կը պատուիրեն յաւուր տօնի «Արդէի հայրապետի Եղեսիոյ քաղաքի, աշակերտին Թադէոսի, ընթեռնուլ զթուղթն Աբգարու եւ զգիրս նորին»

Անան, Աբգարու սուրհանդակն, որում յանձնուած էր այս թղթատարութեան պաշտօն, պատուէր ունէր իւր վեհապետէն Երուսաղեմի տաճարին մէջ զու մատուցանել տալու, ինչպէս ժամանակին Մեծն Աղեքսանդր եւ այլ հեթանոս իշխանք արած էին. վասն զի որքան որ հեթանոսք կ'ատէին զՀրէայս, դարձեալ մեծ յարգանօք եւ ակնածութեամբ կը հայէին մովսիսական կրօնի եւ Երուսաղեմի տաճարին վերայ: Կ'աւանդուի նաեւ թէ Անան եւ իւր ընկեր պատգամաւորք պատուէր ստացած էին Քրիստոսի կենդանագիրը նկարել եւ տանել Աբգարին: Եւ կը յաւելուն ոմանք թէ երբ նկարչի բոլոր շանքեր անյաշոյ ելան, Տէրն մեր դաստառակ մի առնելով եւ իւր երեսին վերայ դնելով՝ հրաշիւք տպաւորեց իւր պատկեր նորա վերայ եւ յանձնեց սուրհանդակին: Ոմանք բնաւ չեն յիշեր այս դէպք, իսկ այլք, ինչպէս ինքնացին, հրաշալի կերպարանք չեն տար, այլ պարզապէս կը պատմեն թէ Անան իւր հետ բերաւ «զկենդանագրութիւն փրկչական պատկերին,» որ մինչեւ Մովսէս ինքնացւոյն ժամանակ Եղեսիոյ մէջ կը պահուէր:

## Ք Ա Ր Ո Չ

Ի ԳԵՐ. Տ. ՄԱՍՐԻԵ ԵՊ. Է ՄԱՐԿՈՍԵԱՆ

## Ի ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

ԵՍ. ԼԵ 4.

Ահաւասիկ Տէր Աստուած մեր ինքնին եկեցէ եւ փրկեցէ զմեզ:

Հիւանդը բժշկի կը կարօտի եւ վտանգի մէջ եղողը Փրկչի: Հիւանդութիւնն ու վտանգը որչափ ծանր լինի՝ բժշկութիւնն ու փրկութիւնն ալ այնքան զժուարիին կը լինի, եւ մեծ ճարտարութեան եւ իմաստուն հնարքներու պէտք կ'ունենայ:

Մարդկային բնութիւնն ապականող ամենածանր հիւանդութիւնը մեղքն է. եւ ամենաչար ու անհնարին վտանգն ալ Աստուծոյ հեռանալն է: Այս երկու ահաւոր չարիքներն են որ մարդուն ներկայ եւ ապագայ երջանկութիւնը կը բառնան, եւ սոսկալի թշուառութեանց կը մատնեն հոգին ալ մարմինն ալ: Նոյն իսկ ներկայ կենաց մէջ պատահած ծանր ու զժուարաբոյժ հիւանդութեանց բուն սկզբնապատճառն եթէ քննուի, շատ անգամ մեղքն ու անհնազանդութիւնը պիտի գտնուի:

Սկիզբէն մարդ մեղանչելով կորսնցուց հոգւոյ կատարելեանց մեծ մասը, որով Աստուծոյ կը նմանէր. այն օրէն հեռացաւ Աստուծոյ, ինկաւ իւր բարձրութենէն եւ նըւաստացաւ. այն օրէն մատնուեցաւ հոգեւոր հիւանդութեանց եւ կը գիմէր յապականութիւն, կորսնցուց սրտի եւ մտքի խաղաղութիւն. անչա՛հ խորհրդոց եւ վնասակար կրից ձեռքը խաղաղիկ եղաւ, (արդէն ամեն մեղանչողի վիճակն այս է.) զրկուեցաւ զԱստուած վայելելու անպատու երջանկութենէն: Երկար դարեր այն թշուառութեան մէջ կը հեծէր մարդկութիւնը, սակայն չկար ճարտար հնարք մը, զօրաւոր ձեռք մը որ ազատէր զայն իւր ապականեալ վիճակէն, քանզի ամենքն ալ միեւնոյն դատապարտութեան տակն էին. Աստուծոյ ամենակարող իմաստութիւնը եւ նորա արարչագործ ձեռքը միայն կրնար բժշկել եւ ազատել մարդկութիւնը այն ապականութենէն:

Ամենաբարին Աստուած մարդուն մեղաց դատապարտութեան վճիռը տուած օրէն խոստացած էր նաեւ փրկութիւնը. «կնոջ զաւակը պիտի ջախջախէ նենգաւոր օձին գլուխը:» Այդ խոստումն եղաւ յոյս, որով փրկութեան

ցանկացող հոգիները կը մխիթարուէին եւ իրենք զիրենք այս փրկութեան ներքոյ կը պատուարէին . մարդկային հոգին կարօտով կըսպասէր այս ամենակարող փրկչին ցանկալի այցելութեան :

Ասկէ յետոյ ամեն դարու մէջ այս խոստումը կրկնուեցաւ զանազան կերպով . օրինակներով, նմանութիւններով եւ յայտնի խօսքերով . ինչպէս, Նոյեան տապանը, որով մարդիկ փրկուեցան ջրհեղեղի ապականութենէն, օրինակ էր Քրիստոսի ձեռօք լինելիք մարդուս հոգեւոր փրկութեան . Աբրահամ իւր Իսահակ որդւոյն աւետիքն ընդունելով եւ զայն զոհելու տանելով՝ տեսաւ Փրկչի տնօրէնութիւն . Յակովբ նահապետ իւր որդիքն օրհնած ասեւ կը մարգարէանայ Փրկչի գալուստը՝ իւր Յուզայ որդւոյն ցեղէն, եւ կը յայտնէ նորա գալու ժամանակին մերձաւոր նշանները . Մովսէսի՝ երբայցեւոց ժողովուրդը նգիպտոսի գերութենէն ազատելը, օրէնք տալը, զոհերու կարգադրութիւնը՝ բոլոր օրինակ եւ նմանութիւն էին այս խոստացեալ փրկչի միջնորդութեամբ լինելիք հոգեւոր ազատութեան : Մովսէս խօսքով ալ յայտնի մարգարէացաւ թէ «Տէր Աստուած քու եղբայրներէդ ինձ պէս մարգարէ պիտի հանէ, անոր լսեցէք :» Այնու հետեւ ալ միշտ ընտրեալ մարդկան ձեռքով կը նորոգէր այս խոստումը եւ աւելի կը պարզէր՝ որոշ պարագաներ, նշաններ եւ գործեր յայտնելով այս խոստացեալ փրկչի մասին :

Եսայի մարգարէ յայտնի եւ պարզ խօսքերով կը մարգարէանայ թէ «Տէրը ինքնին սքանչելիք սը, նշան մը պիտի տայ . ահա կոյսը պիտի յղանայ, որդի պիտի ծնանի, եւ անոր անունը էմմանուէլ պիտի կոչեն, որ Աստուած մեղի հեա է՝ կը նշանակէ : Ուրիշ տեղ մի ալ կըսէ . «Ահա մեր Տէր Աստուածը, ինք անձամբ պիտի գայ եւ զմեզ պիտի փրկէ :» Դաւիթ ալ կը յայտնէ թէ մարդկային ազգի փրկիչը Աստուծոյ խօսքն է, «զրկեց իւր խօսքը եւ բժշկեց ու փրկեց զանոնք իրենց ապականութենէն :»

Աստուծոյ նախասահմանութեան մէջ որոշեալ ժամանակն հասնելով՝ մարգարէից ճիշտ խօսածներուն համեմատ յայտնուեցաւ Աստուծոյ փրկութիւնն : Կոյսն՝ Աստուծոյ իմաստութեան գիտցած կերպովը Հոգւոյն Սրբոյ ներգործութեամբ յղացաւ սքանչելիպէս, եւ կուտութեամբ ծնաւ իւր Միածին Որդին որ կոչեցաւ Յիսուս, որ փրկիչ ըսել է : Աստուծոյ խօսքը մարմին եղաւ եւ եկաւ մարդկութիւնը

փրկելու իւր ապականեալ վիճակէն : Այս Փրկչի հրաշալի ծննդեան տարեգարձն է զոր կը տօնեմք այսօր : Աւետաբեր հրեշտակին հետ ես ալ կ'աւետեմ ձեզ մեծ ուրախութիւն, քանզի փրկիչ ծնաւ ձեզ այսօր Դաւթի Բեթլէհէմ քաղաքին մէջ, որ օծեալ Տէր է :

Բարի քրիստոնեայն կ'ուրախանայ Քրիստոսի ծննդեան վրայ, վասն զի կըզգայ որ Աստուած իրեն հետ է, եւ վասն զի ինք ապականութենէ փրկուած՝ յաւիտեանական կենաց ժառանգ է • ուրախութեան այս երկու շարժառիթներն իւր հոգւոյն մէջ՝ անկեղծօրէն զգացող քրիստոնեայէն աւելի մեծ, աւելի երջանիկ մարդ չկայ :

Աշխարհի տարեգրութեանց մէջ արձանագրուած մեծամեծ ու զարմանալի գործերն ու գէպքերը կը ցածնան կը պըզտիկնան եւ աննշմարելի կը լինին այս մեծ գործոյն առջեւ • Բանին Աստուծոյ մարդեղութիւնը մեծ է եւ վսեմ, գեղեցիկ է եւ բերկրառիթ, վայելուչ է եւ զարմանալի : Մեծ է Աստուած եւ նորա մեծութեան չափ չկայ • բայց արարածի փրկութեան համար Արարիչը իւր անսահման բարձրութենէն կը զիջանի խոնարհիլ արարածին հետ միասնալ, անոր նման լինիլ : Ահա մեծ գործ մը որ անբաղդատելի է, քանզի նմանը չկայ : Աստուածային բարութեան գէմ ապերախտ գտնուող մարդը իւր կործանումէն փրկելու համար նոյն ինքն Աստուած կը կամի որ անձամբ գայ եւ նորա տկարութեանը ձեռնտու լինելով ինքն կրէ իւր աստուածային արդարութեան պահանջած պատիժն • ինքն հատուցում ընէ եւ այս հատուցումը մարդուն վերագրելով փրկէ զայն : Ահա վսեմութիւն աննման որ խորհրդածու մտաց՝ հիացումն, պատկառանք եւ սոսկում կը պատճառէ : Աստուծոյ մարդեղութիւնը իւր բարեկարգ համեմատական կատարելութեամբ անհամեմատ գեղեցիկ է, իւր փրկարար արդեամբը ուրախառիթ է, աստուածային ներգործութեամբ մարմնառութիւնը վայելուչ է, եւ կուսական ծնունդը զարմանալի, որ հրաշալիաց գերագոյնն է եւ Աստուծոյ ամենակարողութեան մեծ գործը :

Արդ՝ ինչ՞ անճառ միտիթարութիւն, որ՞ քան բերկրալի ցնծութիւն է գիտնալ, որ ամենաբարին Աստուած իւր անբաւ մեծութենէն եւ անհաս բարձրութենէն խոնարհելով մեզ նման կը լինի եւ մեզ հետ կը բնակի, որ զմեզ բռնիկէ, սրբէ, փրկէ եւ իրեն նմանցնէ : Մարդկային խոր-

հրդով սա մի անհնարին գործ էր. սակայն Աստուծոյ արարչական սէրը, հայրական գուժը եւ բարութիւնը հնարաւոր ըրաւ. անձառ սիրով կամեցաւ, քաղցր գլխով եւ բարութեամբ խոնարհեցաւ, եւ աստուածային իմաստութեամբ մարմին առաւ, միացաւ մեր բնութեան հետ, Աստուած մեզի հետ եղաւ, որպէսզի զմեզ մեր ապականութենէն փրկելով սրբէ եւ իրեն աստուածային փառաց հաղորդ ընէ: Ով՛ անձառելի խորհուրդ. Ով՛ աստուածային անսպառ սիրոյ անչափելի ապացոյց. մարդկային լեզուն շատ աղքատ է, եւ խօսք չունի բացատրելու համար այս սիրոյ խորհրդոյն մեծութիւնը. մայր մեր սուրբ Եկեղեցի ալ իւր հրեշտակային երգոց մէջ զմայլեալ հիացումով Կերգէ — Սորհուրդ մե՛ծ եւ սքանչելի՛, որ յայսմ աւուր յայտնեցաւ:

Ամենագութն Աստուած ինչպէս իւր բարութեամբ տիեզերքն ստեղծեց, անանկ ալ նոյն բարութեամբ չ'ուղեւորով մարդուն կորսուելը՝ իւր խոստման համեմատ ժամանակին զրկեց իւր միածին Որդին, որ աստուածային կամօք եկաւ ամենամաքուր կոյս Մարիամէն մարմին առաւ, մարգարէից նշանակած Դաւթի Բեթղեհէմ քաղաքին մէջ ծնաւ, որոյ պարզ պատմութիւնն անգամ հրատանգիչ եւ շանաւոր լինելուն, կ'ուզեմ համառօտ մը պատմել. ուշագրութեամբ լսեցէք: — Օգոստոս կայսր հրաման ըրած էր որ իւր իշխանութեան սակ գտնուած բոլոր մարդիկ գրի առնուին. այս հրամանին մէջ մասնաւորութիւն մի կար որ նախախնամական էր. ամեն մարդ ուր որ գտնուէր պարտաւոր էր իւր բնիկ հայրենիք երթալ եւ հոն արձանագրել տալ իւր անունն: Սուրբն Յովսէփ եւ սրբուհի կոյսն Մարիամ Դաւթի ցեղէն լինելով (իրենց հայրենիք Բեթղեհէմ էր) պարտաւորեցան նաղարէթէն Բեթղեհէմ երթալ. գիշերը վրայ կը հասնի. քաղաքը նորիկ բազմութեամբ լեցուած է. այս աստուածային հիւրերուն տեղ չկար իջեւանին մէջ, հիւրընկալող բարեսիրտ մէկն ալ չգտնուեցաւ եւ մնացին անպատուպար: — Ափսոս՛. արգեօք քանի անգամ մեր Փրկիչն իւր շնորհայ ներգործութեամբ մեր սրտին գուռը բաղխած է եւ մենք տեղ չենք տուած, մեր սիրտերը օտար հիւրերով, կիրքերով եւ աշխարհային ցանկութիւններով լեցուած՝ Յիսուսի հանգստեան տեղ չէ գտնուած, որ հեռանալով մեզմէ հանգչած է խոնարհ, խաղաղ եւ սուրբ սիրտերու մէջ: — Այսպէս գուրսը մնալով քաղաքին մէկ ծայրն այր

(մաղարայ) մը գտան, ուր գէշ օգիտու ժամանակ հովիւներ իրենց ոչխարներն ու արջառները կը պահէին: Յովսէփ եւ Մարիամ այդ այրը կը մտնեն գիշերն անցնելու: Բայց սուրբ Կուսին ծնանելու ժամանակը հասած լինելով՝ այդ առանձնութեան մէջ մարդու օգնութենէ զուրկ կը ծնանի իւր միածին Որդին, զոր խանձարուրով փաթթելով կը հանգչեցնէ մսուրին մէջ: — Ով՛ անճառ խոնարհութեան մարդիկ տեղ չեն տար, բայց անասնոց մսուրն երկնի եւ երկրի Տիրոջ բնակարան կը լինի: Բայց ինչ՞ու այս զբրկանքն ու տառապանքն միթէ չէ՞ր կարող կանխաւ իրեն համար վայելուչ տեղ պատրաստել: Անշուշտ կարող էր. բայց այսպէս կամեցաւ, որպէսզի սովորեցնէ թէ ճշմարիտ փառքն ու ճոխութիւնն անձին արժանեաց մէջ է եւ ոչ թէ շքեղ ապարանքներուն մէջ: Ի՛նչ մեծ մխիթարութիւն է բարեխրտ եւ բարեպաշտ աղքատներուն համար տեսնելով որ սուրբ Կոյն Մարիամ եւ սուրբն Յովսէփ թագաւորական ցեղէ, Յիսուս չէր բոլորից, թագաւոր թագաւորաց եւ Աստուած արարիչ լինելով՝ կը խոնարհին, կը զիջանին ասանկ աղքատ եւ խեղճ բնակարանի մը մէջ բնակիլ: Թող չը տրտնջան աղքատներն, եւ թող չը հպարտանան հարուստ մեծատուններն. երկուքին վիճակն ալ փոփոխական եւ անցաւոր է: Կուզէ՞ք ուրիշ խորհուրդ մի ալ ըսեմ. չէ՞ որ մարդկային բնութիւնը մեղքով ցածցած, իւր բարձրութենէն ինկած, ապականուած, անբան անասուններու հաւասարելով անոնց նմանած էր. ուրեմն Յիսուս ալ անասնոց մէջ կ'իջնայ, որ մարդկութիւնն անասնական վիճակէն հանէ բարձրացնէ եւ աստուածային փառաց հաղորդ ընէ:

Ասկայն Աստուծոյ այս մեծ գործը ծածուկ չը պիտի մնար. պէտք էր յայտնուիլ: Բեթղեհէմ քնոյ մէջ էր. քաղաքէն քիչ հեռի դաշտին մէջ միայն քանի մը հովիւներ արթուն էին եւ իրենց հօտը կը պահէին. յանկարծ երկնքէն պայծառ լոյս մը կը սփռի եւ լուսաւոր փառքով հրեշտակ մը կ'իջնայ. հովիւք մինչ զմայլման եւ զարհուրանաց մէջ կը դողային, հրեշտակն աւետիս տալով կը քաջալերէ զանոնք. «Մի՛ վախնաք,» կ'ըսէ, «անա ձեզի մեծ ուրախութեան աւետիս կուտամ, քանզի այսօր Դաւթի քաղաքին մէջ ձեզի փրկիչ ծնաւ, որ օծեալ Տէր է, եւ այս լինի ձեզ նշան, որ խանձարուրով պատած եւ մսուրի մէջ դրուած մանուկ պիտի գտնէք:» Հովիւներն սպաշած, զարմացած, հանով ու

գողով մտիկ ըրած ատեննին յանկարծ կը տեսնեն երկնային զօրաց բազմութիւն մի ալ որք կ'երգէին, «Փա՛ռք 'ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն:» Քրիստոսի մարդեղութիւնն Աստուծոյ փառքն է, անոր հետեւելով երկրի վրայ խաղաղութիւն կը լինի, եւ մարդկան մէջ սէր, հաճութիւն եւ համաձայնութիւն: — Երբ հրեշտակները վերացան, հովիւներն եկան Բեթղեհէմ, տեսան աստուածային մանուկը, եւ իւրեանց խոնարհ երկրպագութիւնը մատուցանելով կը փառաբանէին զԱստուած, եւ բոլոր տեսածնին ու լսածնին կը պատմէին ամենուն: Երանի այս հովուաց, որ արթուն, հեզ եւ բարեսիրտ լինելով արժանացան երկնաւոր տեսլան եւ Յիսուսի փրկառիթ ծննդեան շնորհաց. իսկ քնացող Բեթղեհէմցիք զրկուեցան ամեն փառքէ եւ շնորհքէ: Ափսո՛ս՝ միշտ ալ ասանկ կը լինի. երբ մենք մեղքի եւ սնոտի զբաղմանց թմրութեան մէջ թաղուած կը լինինք, շնորհաց ազդեցութիւնը չենք զգար, Աստուծոյ խօսքը չենք լսեր, մտիկ չենք ըներ, կը մերժենք, այն ատեն փրկութեան աւետիսը մեզ չը գար, այլ կ'երթայ հոգևով զգաստ, կամքով ու գործով արդար, սրտով սուրբ եւ մտքով արթուն եղողներուն, եւ փրկութեան ուրախառիթ աւետիսը տալով կը մխիթարէ: Ո՛վ քրիստոնեայք, փրկութիւնն ընդունելու անհոգ չը լինինք. հովիւք բանաւոր հօտին Քրիստոսի, զգաստ լինինք. երկիւղած արթնութեամբ, սրբութեամբ եւ արդարութեամբ հսկենք Աստուծոյ հօտին վրայ, որ շնորհաց եւ երկնային այցելութեան արժանի լինինք:

Այսպէս ուրեմն երեւեցաւ փրկիչն աշխարհի, խոնարհ, հեզ, մանուկ եւ աղքատ վիճակի մէջ, որպէսզի ամեն վիճակի եւ աստիճանի մարդ կարողանայ համարձակ մօտենալ, քանզի ամեն մարդ կարօտ է փրկութեան: Ահա ճշմարիտ մեծն ու փոքրն, ահա իսկապէս բարձրն ու խոնարհն՝ հեղութեամբ մօտենանք իրեն, որ մեծանանք, սիրով միանանք իրեն հետ ու բարձրանանք:

Աստուծոյ խոստացած մարդկութեան փրկիչը ծնաւ, մարդկային բնութեան հետ միացաւ. «բանն մարմին եղեւ եւ բնակեցաւ 'ի մեզ.» եւ խոստացաւ միշտ մեղի հետ լինիլ, եթէ մենք՝ իրեն զզուելի եղող մեղքը մեր եւ իւր մէջ անջրպետ չը գնենք: Ուրախ լինինք, գոհութեամբ փառք տանք Աստուծոյ, օրհնենք մեր բարերար Փրկիչն, որ մեր

փրկութեան համար խոնարհեցաւ, մարմին առաւ եւ զմեզ մշտնջենաւոր մահու գերութենէն ազատեց. երկինց փակած դռները բացաւ մեր առջեւ, կեանքն ու անմահութիւնը մեր կորուսած հայրենի ժառանգութիւնը վերստին շնորհեց մեզ. մեղաց եւ ապականութեան ծառայ եղած ատենն իս՝ սիրով, գթութեամբ եւ իւր անձին արգարութեամբը սրբեց, փրկեց զմեզ եւ «Աստուծոյ որդիներ» ըսուելու գերազանց տիտղոսն եւ անհամեմատ փառքը պարգևեց մեզ: Մարդը ցանկացաւ Աստուած լինիլ, բայց աստուածանմանութիւնն ալ կորսնցուց, քանզի Աստուծոյ հակառակ ճամբայ բռնեց. ուստի Աստուած մարդացաւ, որ մարդը աստուածայնէ. եւ անա Փրկչին ծննդեամբը կը շնորհուի մարդուն իր սահմանին մէջ՝ աստուածանալու իշխանութիւն: Արդարեւ մեծ եւ անչափելի շնորհք: Բայց այս փառաւոր շնորհաց հասնելու համար հարկ է Փրկիչն ընդունիլ, անոր հաւատալ եւ՝ զնա սիրել. առանց այս պայմաններուն կարելի չէ որ Աստուած մեզի հետ լինի, անհնարին է որ մենք փրկուած լինինք, եւ ոչ երբէք կրնանք Աստուծոյ որդիներ լինել: Գիտեմ, այժմ պիտի ըսէք թէ՛ փառք Աստուծոյ, մենք քրիստոնեայ ենք, զՔրիստոս ընդունած ենք մեզ փրկիչ, հաւատացած ենք անոր ու կը սիրենք զինքն, ուրեմն անշուշտ Աստուծոյ որդիներ կոչուելու արժանի ենք: — Շատ լաւ: Բայց զՔրիստոս իբրեւ իւր Փրկիչն ընդունողն կը պարտաւորի իւր անձն արժանի մաքուր տաճար մը պատրաստել, որ յօժարի Փրկիչը հոն բնակելու. անոր հաւատացողն ամեն կերպով կը հնազանդի եւ նորա հրամանները կը կատարէ. զայն սիրոշն իւր կամբը նորա կամաց կ'ենթարկէ, անոր կամքին հակառակ բան չի ըներ, մինչեւ անգամ հարկ եղած ատեն կեանքն ալ նորա սիրոյն համար կը զոհէ, կ'ապրի Աստուծոյ համար, կը մեռնի Աստուծոյ համար: Փրկուած հաւատացեալին, այսինքն ճշմարիտ քրիստոնեային նշաններն ասոնք են. ասանկները միայն իրաւունք ունին Աստուծոյ որդիներ կոչուելու:

Ո՛վ քրիստոնեայ, եթէ դուն ալ այսպէս ես, երանի՛ քեզ. մեծ է քու փառքդ, անչափ եւ անտրտում է քու ուրախութիւնդ, քանզի բանն Աստուած քեզ համար մարմնացած կը լինի, զքեզ գրկած եւ քեզ հետ միացած կը լինի. դու արժանի ես Աստուծոյ որդի կոչուելու: Բայց եթէ քու կեանքդ նորոգուած չէ, եթէ փրկիչդ հնազանդ չես, եթէ քու յօժարութեանց ու աշխարհային ցանկութեանց

կը հետեւիս, մի՛ խարուիր, 'ի զուր մի՛ պարծիր. լոկ քրիստոնեայ անուէնն առանց վարուց անարատութեան օգուտ չընէր. Քրիստոսի ծննդեան տարեգարձի ուրախութիւնը քեզ համար չէ. դուն նորա արդիւնքն քու կամքովդ մերժած ես քեզմէ եւ անպտուղ ըրած ես: Կուզե՞ո վայելել այն մեծ ուրախութիւնը զոր կըզգայ ճշմարիտ քրիստոնեայն, շուտով դարձի՛ր ունայնութեան գործերէդ. հաւատա՛ Փրկչիդ սիրով եւ հնազանդութեամբ. ապրէ՛ Աստուծոյ որդւոյ նման՝ սուրբ, արդար եւ երկիւղած. այն ատեն պատրաստ է Փրկիչն զքեզ ալ ընդունելու, փառաւորելու եւ ուրախացնելու:

Հապա՛, քրիստոնեայ ժողովուրդ, Քրիստոսի կենսաբեր ծննդեան յիշատակը կատարելով՝ միտքերնիս պահենք նորա երախտիքն, անմոռաց յիշենք նորա սէրն ու գթութիւնն, մենք ալ սիրենք զինքն կատարեալ սիրով, հնազանդինք իրեն, եւ իրարու հետ խաղաղութեամբ, հաճութեամբ եւ համաձայնութեամբ ապրինք. իբրեւ Աստուծոյ սեպհական ժողովուրդ՝ նորոգուած, սուրբ, զգաստ, արդար եւ բարեպաշտ վարքով ապրինք աշխարհի մէջ, որ Փրկչին մերոյ փրկագործութիւնն արդիւնաւոր լինի մեր վրայ, եւ մենք ընդունինք ու վայելեմք խոստացեալ երանութիւնն որում մանկացեալ Բանն Աստուած՝ արժանի արասցէ զամենեսին. Ամէն:

### ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԳՐԶԱԳԻՐ ԱԻԵՏԱՐԱՆՆ

Մոսկուայի Լազարեան ճեմարանն վերջերս մի մեծ եւ կարեւոր ծառայութիւն մատուցած է որպէս հայ բանասիրաց նոյնպէս և Ս. Գրոց ուսմամբ և քննութեամբ պարապող գիտնականաց առհասարակ: 'ի վաղուց հետէ ծանօթ էր բանասիրաց Լազարեան մատենադարանում պահուած իններորդ դարու հըռչակաւոր գրչագիր Աւետարանի անունը, և անտարակոյս շատեր կը փափաքէին առիթ ունենալ սոյն նախնեաց հնութեան սուրբ նշխարն աչքով տեսնել, և բարեպաշտութեան հետ մէկտեղ ուսումնասիրութեան տենչը յագեցնել: Այս խառն բաղձանաց

կատարեալ զոհացում՝ տուած է Լազարեան ձեմարանի վարչութիւնն՝ լուսատիպ գրութեամբ իմն հրատարակելով մեր ազգի մէջ ծանօթ ամենէն հին գրչագիր աւետարանն։ Տպագրութիւնն կամ լուսատիպ նմանահանութիւնն այն աստիճան կատարելութեամբ եղած է որ անկարելի կը թուի իսկական ձեռագիրէն աւելի օգտուիլ քան նորա այս նմանատիպ օրինակէն։ Եւ այս զի՝ մեր ձեռքը գտնուած նմանահանութիւնը, շնորհիւ հրատարակչաց և Մեծ. Պրօֆ. Գրիգոր Խալաթեանցի խնամքով պատրաստուած յառաջարանին, այնպիսի գլխութիւններ կ'ընծայէ ուսումնասիրելու, զոր միայն երկար և տաժանելի աշխատութեամբ կարելի է ստանալ իսկական գրչագրէն։ Պրօֆ. Խալաթեանց զկնի գրչութեան և յիշատակագրութեան հանգամանքներն պարզ և ամփոփ կերպիւ բացատրելու, գրչագրի չափանշանայտկուութիւնները կը քննէ և մեր ընկալեալ սովորական տպագիր Աւետարանաց հետ բազդատելով, ամենէն ուշագրաւ և կարեւոր տարբերութիւններն ըստ կարգի չորից Աւետարանաց կը դասաւորէ, գրչագրի իւրաքանչիւր ընթերցումոյն հանդէպ մեր մէջ զործածական տպագիր Աւետարանի ընթերցումածը դնելով։ Նոյնպէս կը թուէ լուսատիպ Աւետարանի գիտնական խմբագիրն, այն բոլոր բառեր և նախադասութիւններ որք մեր ընկալեալ տպագիր Աւետարանաց մէջ գտնուելով հանդերձ՝ սոյն եզական գրչագրի մէջ չկան։ Ապա լեզուաբանական յատկութիւններն յերևան կը հանէ յառաջարանն, նախ քերականական շարադասութեան տարբերութիւններն յառաջ բերելով և յետոյ ուղղագրութեան վերաբերեալ բազմաթիւ տարբեր և անսովոր ձեւերի գլխաւոր օրինակներն նշանակելով։ Այսպիսի հմտալից տեղեկութիւններով Պրօֆ. Խալաթեանց դիւրացուցած է ուսումնասիրութիւնն Լազարեան գրչագրի որ հանդեձեալ է կարեւոր առաջնորդութիւն

ընծայել ինչպէս հայկաբանին նոյնպէս և աստուածաբանին:

Տակաւին շատ կանուխ է սոյն գրչագրի վերայ վճռօրէն խօսել. միայն այսքանը կարելի է այժմէն ասել՝ թէ յամենայն դէպս շատ կարևոր է: Գրչագիր Աւետարանն այնպիսի յատկութիւններ ունի որ զուցէ իւր նմանն երբէք ունեցած չէ. գէթ այսքանը դիտենք որ այն բազմաթիւ բառերի և դարձուածների տարբերութիւնն և փոխադրութիւնն զուր ուրեք կը գտնուի մեզ ծանօթ տպագրեալ Աւետարանաց մէջ. և Զօհրապեան վարդապետի հետազօտած և բաղդատած գրչագիր Աւետարաններէն և ոչ մին ունեցած է այն ուշադրաւ և արտաքոյ կարգի մեծ տարբերութիւն ընթերցուածոց զոր այս ձեռագիրը կը ցուցանէ: Գլխաւոր տարբեր ընթերցուածներն, մասնաւորապէս Պրօֆ. Խալաթեանցի նշանակածներն, այնպէս են որ երբէք կարելի չէ ենթադրել թէ այդ տարբերութիւնք ընդօրինակողի տգիտութենէն կամ անուշադրութենէն յառաջ եկած են: Ոչ ևս կարելի է կարծել թէ մեր նախկին թարգմանիչք Ս. Գրոց սոյն գրչագրի եղանակաւ թարգմանած լինին՝ ի սկզբանէ, վասնզի թէ հայ գրչագրաց ընդհանուր վկայութիւն և թէ յոյն բնագիրն յայտնապէս հակառակը կ'ապացուցանեն: Չընայելով այն աննշան տառասխալներին որ բազում ուրեք գրչագրի մէջ կ'երևին, գրչագրի ընդօրինակողն՝ Սահակ Վանանդացի, կամ նորա նախագաղափարի ընդօրինակողն՝ հմուտ հայկաբան և աստուածաբան ոմն էր, և հաւանօրէն նաև հմուտ յունագէտ, թէպէտև իւր սրբագրութեան միջոցին զուր ուրեք յունական բնագրին կ'ակնարկէ: Ուստի քանի որ տարբերութիւնք ոչ տգիտութենէ և ոչ անուշադրութենէ յառաջ եկած են, և միանգամայն հմուտ մարդու գործ լինել կը թուին, կըհետևի որ այդ տարբերութիւնք դիտմամբ և որոշ նպատակաւ եղած են:

Մեր գրչագրի ժամանակակից յունական Աւետարանի օրինակաց մէջ ևս ընթերցուածոց բազում տարբերութիւնք կը գտնուին, որ ոչ թէ յակամայից սպրդած սխալներ են, այլ մեր գրչագրի պէս գիտմամբ և որոշ նպատակաւ (ըստ մեծի մասին բարի նպատակաւ,) կատարուած սրբագրութիւններ են բնագրի վերայ: Գուն ուրեք սրբագրողք չար նպատակաւ կը փոփոխէին Ս. Գրոց խօսքերն իւրեանց վարդապետական մոլորութիւններն աստուածային յայտնութեամբ վաւերացնելու և տարածելու նպատակաւ: Ս. Գրոց այսպիսի աղաւաղեալ օրինակներ իւրեանց վարդապետաց հետ անհետացած են, և մեզ հասած հազարաւոր ձեռագրաց մէջ տակաւին մէկը գտնուած չէ որ այսպիսի չարամիտ խեղաթիւրումներ կրած լինի: Բայց բարենպատակ փոփոխութիւններ եղած են ուղղագրութեան, ոճից և դարձուածոց նկատմամբ, ըստ կարելոյն յունական վայելչաբանութեան մօտենալու գիտմամբ, քանզի նոր կտակարանի հեղինակներ ազգաւ և լեզուա հրեայ լինելով՝ շատ անգամ եբրայական ոճեր և յունական լսելաց խորթ ու անախորժ դարձուածներ գործ կ'ածէին: Երբեմն նաև մէկ գծուարիմաց բառի տեղ մի աւելի գիւրբմբռնելի բառ կը դնէին՝ Ս. Գրոց միտքը պարզելու և մեկնելու համար կամ վարդապետական մի թիւրիմացութիւն փարատելու համար: Յաճախ մէկ Աւետարանի խօսքերն միւս երեք Աւետարանաց հակառակը չեղեցնելու համար, մէկը միւսի բառերովը կը համաձայնեցնէին: Ոչ սակաւ անգամ եկեղեցական պաշտամանց մէջ գործ ածած փառաբանական խօսքեր (որպէս « Հայր մեր » ին կցուած « Ձի քո է արքայութիւն ևայլն) կամ 'ի լուսանցս գրչագրաց գրուած բացատրութեան խօսքեր և համանշանակ բառեր հետըզհետէ բնագրի մէջը մտած են:

Դառնալով մեր գրչագրի տարբեր ընթերցու-

ծոց, կը հարցնեմք՝ ի՞նչ էր Սահակ վանանդազույն կամ նորա նախորդի նպատակն այդպիսի և այնքան փոփոխութիւններ և սրբագրութիւններ մտցնելու Մեսրոպեան թարգմանութեան մէջ, քանի որ ոչ տգիտութիւն կամ անուշադրութիւն և ոչ շարամտութիւն կարէ ենթադրուիլ: (Նոյն իսկ երբ Մար. ԺԵ. 36 «Արդարև այրս այս Որդի Աստուծոյ է» կը փոխէ «արդարև այրս այս արդար է, և սորա պէս մի քանի ուրիշ կէտեր՝ բաւական չեն նորա ուղղափառութիւն կասկածի ենթարկելու:») Պրոֆ. Խալաթեանցի յառաջ բերած տարբերութիւնք, որք անշուշտ ամենէն կարևորներն են, յոյն բնագրի ձեռագրաց հետ բաղդասելով կը տեսնենք որ նորահնար ընթերցուածոց հեղինակն ոչ այնքան յոյն բնագրի համեմատ կատարած է իւր սրբագրութիւնն որքան հայկական Աւետարանի այլ և այլ մասերին աւելի ճիշդ ու տրամաբանական, պարզ ու դիւրիմաց, վարդապետական թիւրիմացութենէ զերծ և հայկական վայելչաբանութեան աւելի հաւատարիմ թարգմանութիւն ընծայել: Ս. Մեսրոպ և իւր աշխատակիցք ըստ մեծի մասին աշխատած են Ս. Գրոց բնագիրն ըստ կարի բառ առ բառ հայացնելու, և միանգամայն հայկաբանութեան հաւատարիմ մնալ, յունական իւրաքանչիւր բառի և ոճոյ և դարձուածի համահաւասար և համազօր հայկական բառ և ոճ և դարձուած գտնել և այնպէս թարգմանել, այլ ուրեք ուրեք նախամեծար համարելով յունական լեզուի յատկութեամբք ներկայացնել իւրեանց թարգմանութիւն և ստրկային երեւիլ քան թէ Ս. Գրոց բուն մտաց և ի՛աստի դէմ մեղանչել: Ս. Մեսրոպեանք այն առաւելութիւնն ունէին որ՝ քրիստոնէութիւնն Հայոց մէջ համեմատաբար գեռ նոր հաստատուած լինելով, Ս. Գրոց թիւրիմացութեան կամ՝ի հակառակորդաց խեղաթիւրման երկիւղ չունէին: Սակայն մեր գրչագրի սրբագրողն երեք չորս դարու փորձառու-

Թեամբ համոզուած էր որ հայկական Աւետարանն  
 ևս նոյնպիսի բարեփոխութեանց կարօտ էր որոց  
 ենթարկուած էր արդէն 'ի բազում ուրեք յունա-  
 կան Աւետարանն: Այդ բարեփոխութեանց գաղա-  
 փարն կարելի է որ 'ի Յունաց փոխ առած էր, այլ  
 մի որ և է յունական Աւետարանէ թարգմանած չէ.  
 ոչ ևս կարելի էր թարգմանել, քանի որ իւր նպա-  
 տակն էր հայկական Աւետարանն առաւել ևս հա-  
 յացնել առանց շատ ուշադիր լինելու յունական  
 բնագրի իսկական բառերին և ոճերին: Թերևս  
 սկզբունքի և վարդապետական տարբերութիւն ևս  
 կար 'ի մէջ Սրբոց Մեսրոպբեանց և գրչագրիս ըն-  
 թերցուածոց հեղինակաց: Նախկին գարուց մէջ  
 սուրբ հարք կը սիրէին հաւատալ և ուսուցանել թէ  
 Ս. Գրոց իւրաքանչիւր բառ, ոճ ու դարձուած աստ-  
 ուածային ներշնչմամբ գրուած էր, և այս պատ-  
 ճառաւ թարգմանութեան միջոցին ամեն ջանք 'ի  
 գործ կը գնէին իւրաքանչիւր բառ ու ոճ ըստ կա-  
 րելւոյն հաւատարմաբար իւրեանց բնիկ լեզուա-  
 արտայայտել: Բայց մեր գրչագրի ընդօրինակող  
 և սրբագրող տարբեր կարծիք ու հաւատք ունէր:  
 Ս. Գրոց միաքն իբրև ներշնչեալ կը համարէր, բա-  
 ռերն ու քերականական դարձուածներն արտաքին  
 և մարդկային զգեստն էր աստուածային մտաց:  
 Ուստի միտքը հասկանալէն յետոյ, կ'աշխատէր ա-  
 մենէն յարմար և վայելուչ, տրամաբանօրէն ճիշտ  
 և քերականօրէն ուղիղ, թիւրիմացութենէ զերծ և  
 ըստ կարի դիւրամբունելի ոճն ու բառն գործածել,  
 երբեմն նաև արտաքին բառեր աւելցնելով կամ  
 նոյն իսկ աւելորդ երևցածն զգուշութեամբ յապա-  
 ւելով: Պրօֆ. Խալաթեանցի յառաջաբանի մէջ նշա-  
 նակուած բոլոր տարբերութիւններն յոյն բնագրի  
 հետ բաղդատելով, այն զարմանալի արդիւնքն  
 ստացայ որ հազիւ թէ մէկ կամ երկու հատուածի  
 հանգիպեցայ ուր գրչագրի ընթերցուածն յոյն բնա-

գրին աւելի մօտ կ'երևէր քան թէ մեր ընկալեալ (տպագիր) Աւետարանի ընթերցուածոյն: Միւս կողմանէ, այդ չնչին բացառութեամբն, յառաջ բերուած հարիւրէն աւելի վկայութիւնք տպագիր Աւետարանի՝ բառ առ բառ կը ներկայացնէ բնագրի ճիշտ միտքն ու խորհելու ձեւն ու գործածած ոճն, մինչդեռ Լազարեան գրչագիր բառի բուն նշանակութեամբն ազատ թարգմանութիւն մի կը ներկայացնէ, կամ աւելի լաւ, Մեսրոպեան թարգմանութեան սրբագրութեան միտքն ըմբռնելով՝ կ'աշխատի լաւագոյն և պատշաճագոյն, տրամաբանօրէն ուղիղ և հայ լեզուի վայելուչ ոճովն ու դարձուածներովն թարգմանել: Եթէ մեր գրչագրի փոփոխութիւններն գրեթէ ոչինչ ընդունելութիւն գտած են Հայաստանեայց Եկեղեցւոյ կողմանէ, պատճառն հաւանօրէն այն յանդգնութիւնն էր որով մեր պաշտօնական թարգմանութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու ձեռնարկուած էր:

Այժմ կը մնայ միայն որ յաջորդ յողուածով մի քանի օրինակներ յառաջ բերեմ՝ ի հաստատութիւն նախընթաց եղրակացութեանց: Նոյնպէս մի քանի խօսքով նկարագրեմ նորատիպ գրչագրի արտաքին յատկութիւններն, այսինքն, գրչութիւնն, կէտագրութիւնն, ուղղագրութիւնն և այլն: Մինչ ցարդ Լազարեան գրչագիրն միմիայն հայկական տեսակէտով կարևոր գտած եմ, և Աւետարանի յոյն բնագիրն ստուգելու վկայութիւններն մանրամասնութեանց մէջ շատ պակաս և նուազ կարևոր գտած եմ: Բայց թէ մեր ձեռագիր ունի նաեւ յունական բնագիրը լուսաբանող յատկութիւններ՝ յաջորդ թուով պիտի տեսնենք



